

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՀԱՆՔԻ (Զ)ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

սոցիալ-քաղաքական հետևանքները

ՀԱՄԱՌՈՏ ԶԵԿՈՒՅՑ



Սոցիոսկոպ

2019 Օգոստոս

Երևան

## Բովանդակություն

Ինչի մասին է համառոտ զեկույցը .....	3
<i>Ամուլսարի շարժման մասնակից և աջակից քաղաքացիական խմբերը</i> .....	4
Շարժման ընթացքը .....	4
«Ամուլսարի պահապաններ» և ՀԲՃ.....	8
Բնակիչների հանրագրերը.....	9
<i>Հեղափոխության սոցիալական հենարանի խնդիրը</i> .....	10
<i>Ամուլսարի կոնֆլիկտում շահագրգիռ ներքաղաքական կողմերը</i> .....	12
<i>Ամուլսարի կոնֆլիկտում շահագրգիռ արտաքին կողմերը</i> .....	14
Սփյուռք .....	14
Արևմուտք-Ռուսաստան.....	15
Միջազգային շարժումներ .....	18
<i>Ներդրումների միջազգային արբիտրաժի (ISDS) հարցը</i> .....	19
<i>Հայաստանում տնտեսական ժողովրդավարության հարցը</i> .....	22
<i>Հայաստանի ժողովրդավարության և ինքնիշխանության հարցը</i> .....	25
<i>Ամուլսարում հանքի հնարավոր շահագործման արկածախնդրությունը.</i>	
<i>կոռուպցիայի կասկածները և հանրային անվստահության հիմքերը</i> .....	26
<i>ՀՀ կառավարության ուղերձները` ըստ այս կամ այն որոշման</i> .....	28
- Ամուլսարում հանքի շահագործումը կասեցնելու դեպքում .....	28
- Ամուլսարում հանքի շահագործման թույլատվության դեպքում .....	29
<i>Ամփոփ եզրակացություն</i> .....	30

## Ինչի մասին է համառոտ զեկույցը<sup>1</sup>

Ամուլսարի տարածքում ոսկու արդյունահանման շուրջ առկա կոնֆլիկտը նախաձգնաժամային փուլում է: Այս խնդրի լուծման հարցում ՀՀ կառավարությունը տեսականորեն ունի երկու ճանապարհ՝ թույլատրել Ամուլսարի՝ իբրև ոսկու հանքի շահագործումը կամ կասեցնել Ամուլսարում հանքարդյունահանման ներկա և հնարավոր այլ նախագծերը: Այս երկու ելքերից յուրաքանչյուրն էլ ունենալու է ոչ միայն բնապահպանական, այլև տնտեսական ու սոցիալ-քաղաքական նշանակություն ու հետևանքներ, որոնցից վերջինիս ընդհանուր քննությանն է ուղղված այս համառոտ զեկույցը:

Համառոտ զեկույցը չի անդրադառնում Ամուլսարի տարածքում հանքարդյունահանման բնապահպանական ռիսկերին կամ շրջակա միջավայրի ազդեցությանը, որոնց շուրջ արդեն հայտնի է ՀՀ կառավարության կողմից ELARD միջազգային ընկերությանը պատվիրված փորձաքննության<sup>2</sup> հասանելի մասը, ինչպես նաև հրապարակված են բազմաթիվ տեղական և միջազգային փորձագետների կողմից տրված գնահատականներ<sup>3</sup>: Այն նպատակ չունի նաև խնդիրը դիտարկել գուտ իրավական հարթության մեջ (այս մասով ևս կան հասանելի գնահատականներ<sup>4</sup>), այլ կենտրոնանում է հեղափոխական օրակարգերի տեսանկյունից Ամուլսարի խնդրի սոցիալ-քաղաքական կողմերի վրա:

---

<sup>1</sup> Համառոտ զեկույցը կազմվել է բաց աղբյուրներում հասանելի տեսանյութերի և հոդվածների, մի քանի լրագրողների, փորձագետների հետ հարցազրույցների վերլուծության հիման վրա: Հարցազրույցներից ստացված տեղեկատվությունը օգտագործվել է, եթե այն հաստատվել է այլ աղբյուրներով կամ այլ հարցվողների հարցազրույցներով: Ձեկույցը առավել խորը և համապարփակ հետազոտության նախնական հրապարակումն է:

<sup>2</sup> Համաձայն այս եզրակացության հասանելի հաշվետվության՝ Ամուլսարում հանք շահագործելու ծրագրի ՇՄԱԳ/ԲՄԱԳ գնահատումները թերի են, համապատասխան հետևությունները՝ անվստահելի: Հետևաբար հարցին, թե արդյոք հանքավայրի ընդհանուր շահագործումը կարող է ընդհանուր համարվել անվտանգ, հնարավոր չէ պատասխանել (տե՛ս 5-րդ մաս, էջ 41 <http://investigative.am/news/view/amulsar-porcaqnnutyayn-ezrakacutyun.html>)

<sup>3</sup> Տե՛ս հետևյալ հղումները՝

1. List of Reports and Memoranda Produced by the Bronozian Consultants, Independent Reviewers of Lydian's Amulsar Gold Mine Project in Armenia (n. d.). *Amulsar.com*. [pdf]. <https://bit.ly/2GTFWAj>
2. Ամուլսար. միջազգային հեղինակավոր փորձագետների հաշվետվությունները (2017.08.02). *armecofront.net*. <https://bit.ly/2f3jEJy>
3. Ամուլսարի ծրագրի շրջանի ջրերի և Ջերմուկի թերմալ ջրերի իզոտոպային կազմի վերլուծությունը (առանց ամսաթիվ) *armecofront.net*. [pdf]. <https://bit.ly/2Jcfjo2>
4. Ամուլսարի հանքավայրի շահագործման ընթացքում տարածաշրջանի քաղցրահամ, հանքային և Սևանա լճի ջրերի վրա ազդեցության գնահատման մասին (առանց ամսաթիվ) *armecofront.net*. [pdf]. <https://bit.ly/2KzX0HS>

<sup>4</sup> Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը իր 2017 թ. «Ընդերքօգտագործման իրավունքի տրման գործընթացում ռիսկերի գնահատում» զեկույցում անդրադառնում է գործի իավական խնդիրներին (<https://bit.ly/2ZGLlgP>): Հանքի շահագործումը կասեցնելու և նոր ՇՄԱԳ պահանջելու իրավական հիմքերին անդրադառնում է շարժման հիմնական միավորներից մեկը՝

## *Ամուլսարի շարժման մասնակից և աջակից քաղաքացիական խմբերը*

### Շարժման ընթացքը

Ամուլսարի տարածքում ոսկու բաց հանքի շահագործման դեմ առաջին դիմադրական քայլերը սկիզբ են առել 2010/2011-ից՝ նախնականորեն ներառելով առավելապես տեղացիներին և բնապահպանների<sup>5</sup>: Նրանց մտահոգությունները վերաբերում էին հանքի շահագործման հետևանքով տեղանքի բնական միջավայրի, հատկապես հարուստ ջրային ռեսուրսների (աղբյուրներ, գետեր) և պաշարների (ջրամբարներ), հարակից Գնդեվազ գյուղի ծիրանի այգիների և արոտավայրերի, առողջարանային Ջերմուկ քաղաքի միջավայրի, հանքային ստորգետնյա ջրերի, անգամ Սևանա լճի աղտոտման ռիսկերին, և որպես սրանց հետևանք՝ համայնքների տնտեսական համեմատական բարեկեցության խաթարման և տեղացիների առողջապահական ռիսկերին: Այս շարժման մեջ ներառված էին Գնդեվազ գյուղի, Ջերմուկի թաղամաս համարվող Կեչուտ գյուղի, ինչպես նաև Ջերմուկ քաղաքի բնակիչները, բնապահպաններ, գիտնականներ, տնտեսվարողներ:

Արխիվային նյութերը վկայում են<sup>6</sup>, որ դեռևս 2011 թ. Ամուլսարում հանքի շահագործման հայտ ներկայացրած Գեոթիմ (հետագայում վերանվանվեց Լիդիան Արմենիա, հետևաբար այսուհետ այս զեկույցում Գեոթիմը կանվանենք Գեոթիմ/Լիդիան) ընկերության հետ Ջերմուկում ոչ պաշտոնական թեժ քննարկումների ժամանակ համայնքի ներկայացուցիչները կտրուկ դեմ են արտահայտվել Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրին: Դեռևս 2012-ին ծրագրին դեմ են արտահայտվել նաև Ջերմուկի տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներկայացուցիչները<sup>7</sup>: Դրանց դիրքորոշումը, սակայն, փոխվել է ավելի ուշ, ինչը, ըստ բնապահպանների կասկածների, կարող էր պայմանավորված լինել կոռուպցիոն հնարավոր

---

Հայկական բնապահպանական Ճակատը նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին 2018.05.29 ուղղված իրենց նամակում (<https://bit.ly/2M7KCSA>): Իրավական խախտումներին է անդրադառնում նաև 2018 թ. հունիսին վարչապետի հրամանով ստեղծված հատուկ աշխատանքային խմբի անդամ Նազելի Վարդանյանն աշխատանքային իր եզրակացության մեջ (<https://econews.am/?p=10440&l=am>):

<sup>5</sup> *Ամուլսար-Ոսկու Տենդ* (2011.10.09). EcoLur NGO. [վիդեո]. <https://bit.ly/2YLP9jH>

<sup>6</sup> Ամուլսարի ոսկու հանքի շահագործման թեմայով 2011թ. նոյեմբերի 28-ին Ջերմուկ քաղաքում քննարկում՝ Գեոթիմ ընկերության նախաձեռնությամբ, <https://www.youtube.com/watch?v=0XlmgAGY-fg>

<sup>7</sup> *Առողջարանն ընդդեմ արդյունաբերության. Ջերմուկում հանքավայրի շահագործմամբ կստեղծվեն աշխատատեղեր, բայց նաև կառաջանան մտահոգություններ* (2012.01.19).

[https://ecolur.org/hy/news/amulsar/resort-v-industry-mining-prospect-brings-jobs-but-concerns-for-jermuk/3424/;](https://ecolur.org/hy/news/amulsar/resort-v-industry-mining-prospect-brings-jobs-but-concerns-for-jermuk/3424/)

*Ջերմուկի քաղաքապետ. ի լուր աշխարհի հայտնում ենք, որ Ջերմուկն ընտրել է տուրիզմը, ոչ թե հանքարդյունաբերությունը* (2012.06.12). [https://old.hetq.am/arm/news/15447/;](https://old.hetq.am/arm/news/15447/)

*Ջերմուկի ավագանու 11 անդամներ բաց նամակ են հղել կառավարությանը՝ պահանջելով կասեցնել Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը* (2012.05. 29) [https://news.am/arm/news/107336.html/;](https://news.am/arm/news/107336.html/)

*Ջերմուկի քաղաքապետ. «Աշխարհում ցույց տվեք նմանատիպ դեպք, երբ առողջարանային քաղաքի կողքը լինի հանք»* (2012.03.17), <https://hetq.am/hy/article/11953>

գործարքներով և/կամ անձնական ֆինանսական շահադիտությամբ և/կամ Գեոթիմ/Լիդիանին դիմադրելու անկարողության զգացումով:

Նման մի օրինակ ակներև դարձավ ավելի ուշ: Բնապահպանների ջանքերով բացահայտված տվյալների հիման վրա 2019 թ. Գնդեվազի նախկին գյուղապետի նկատմամբ հարուցվեց քրեական գործ, համաձայն որի գյուղապետը «*համայնքի արոտավայր հողատարածքներից 9.91 հեկտար հողատարածքը 2014թ. մայիսի 29-ին 410.130 ՀՀ դրամով աճուրդային կարգով վաճառել է իր որդուն, ով իր հերթին նշված հողատարածքը 2015թ. մայիսի 26-ին անհամեմատ թանկ՝ 147 300 838 ՀՀ դրամով, վաճառել է հիշյալ ՓԲ ընկերությանը* (ծնթ.՝ Գեոթիմ/Լիդիան ընկ.)՝ *էական վնաս պատճառելով համայնքին*»<sup>8</sup>: Գործը դեռևս գտնվում է նախաքննության փուլում, բայց արդեն համայնքին պատճառված վնասից վերականգնվել է 50 մլն ՀՀ դրամի չափով գումար: Համայնքին պատճառված վնասը, սակայն, չունի զուտ դրամային արտահայտություն, քանի որ հենց այս խոշորածավալ համայնքային հողերի օտարման հետևանքով է, որ գյուղի մյուս բնակիչները համաձայնվել են իրենց փոքր մասնավոր հողերը վաճառել Գեոթիմ/Լիդիանին՝ անիմաստ համարելով դիմադրությունը և հաշվի առնելով «գերակա շահի» մասին օրենքի միջոցով հողերից միննույն է զրկվելու հեռանկարը:

Սկսած 2013-ից՝ Մերժ Սարգսյանի կառավարման երկրորդ շրջանից, շրջադարձային գործընթացներ տեղի ունեցան Ամուլսարի ոսկու արդյունահանման ծրագրի շուրջ օրենսդրական արգելքները շրջանցելու ճանապարհով կառավարության համաձայնությունը կորզելու ուղղությամբ (այս մասին ավելի մանրամասն կներկայացվի ստորև): Այս շրջանում կառավարությունը գլխավորում էր վարչապետ Հովիկ Աբրահամյանը, որ մինչ այդ գործող նախագահ Սարգսյանի նախընտրական շտաբի ղեկավարն էր և ապահովել էր վերջինիս վերընտրվելը<sup>9</sup>:

Ամուլսարի շարժումն այս ընթացքում արդեն բավական թափ էր հավաքել և խնդիրը միջազգային հարթակներում բարձրացնելու կարողություններ էր ձեռք բերել: 2014 թ. ապրիլին Գնդեվազի և Ջերմուկի բնակիչներ և 9 հասարակական կազմակերպություն ու բնապահպանական նախաձեռնություն բողոք ներկայացրեցին Ամուլսարի ծրագիրը ֆինանսավորող կառույցներից մեկի՝ Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) օմբուդսմենի (Համապատասխանության գծով խորհրդականի)

<sup>8</sup> <http://investigative.am/news/view/gndevaz-hamaynqi-xekavar.html>

<sup>9</sup> Հովիկ Աբրահամյանը Մերժ Սարգսյանի նախագահության օրոք աշխատել է Ազգային ժողովի նախագահ, վարչապետ և նախագահի աշխատակազմի ղեկավար, 2008, 2012 և 2013 թթ. նախագահական ու խորհրդարանական ընտրությունների ժամանակ ղեկավարել է ՀՀԿ և ՀՀԿ թեկնածու Ս. Սարգսյանի նախընտրական շտաբները և վերջինիս հետ ունեցել սերտ իշխանական գործընկերություն մինչև 2017 թ.:

գրասենյակ, որն ընդունվեց վարույթ<sup>10</sup> ի տարբերություն ծրագիրը ֆինանսավորող մեկ այլ խոշոր կառույցի՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, որը հրաժարվեց նույնաբովանդակ բողոքի վարույթը իրականացնել<sup>11</sup>:

2014թ. հուլիսին, երբ արդեն սկսվեց Գնդեվազ համայնքում հողերի ձեռքբերման և օտարման գործընթացը, գյուղի բնակիչները կրկին բարձրաձայնեցին իրենց բողոքը ինչպես մամուլով, այնպես էլ երկրորդ բողոքը հղելով ՄՖԿ օմբուդսմենի գրասենյակ՝ այս անգամ շուրջ 200 հոգու ստորագրությամբ, որտեղ բարձրաձայնվում էին իրենց մասնավոր այգիների, վարելահողերի և համայնքի արոտավայրերի օտարման գործընթացի խնդիրները, որն ի թիվս այլ խնդիրների, տեղի էր ունենում «գերակա հանրային շահի» սպառնալիքի ներքո<sup>12</sup>:

Հետագայում ՄՖԿ օմբուդսմենի կողմից հրապարակվեցին նախագծին առնչվող խնդրահարույց հարցեր<sup>13</sup>, իսկ ՄՖԿ-ն 2017 սեպտեմբերին հետ կանչեց իր ներդրումները Գեոթիմ/Լիդիանի նախագծից<sup>14</sup> (պաշտոնական պատճառն այն էր, որ Լիդիանին հաջովել է ներգրավել ֆինանսական միջոցներ մասնավոր հատվածից):

Հատկանշական է, որ հանքարդյունաբերական այս ծրագրի նպատակով շրջակա համայնքային հողերը հանրային գերակա շահ ճանաչելու հարցում առարկություն էր ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարությունը՝ նշելով, որ հիմնավորված չէ, թե ինչով է նախագիծն իրենից համապետական շահ ներկայացնում, և որ այն մասնավոր բնույթի է: Ուստի Գնդեվազ համայնքի բնակիչների չվաճառված հողակտորների նկատմամբ հանրային գերակա շահ ճանաչելը Արդարադատության նախարարությունը գնահատել էր իբրև ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի խախտում, որը, սակայն, Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարությունը հաշվի չառավ<sup>15</sup>: Արդյունքում Գնդեվազ գյուղի բնակիչների մեծ մասը, չնայած հանքի դեմ համայնքային լուսմների և քննարկումների ժամանակ իրենց արտահայտած դիրքորոշումներին<sup>16</sup>, կորցնելով ՏԲՄ աջակցությունը, չզգալով պետության կողմից իրենց շահերի պաշտպանվածությունը, միաժամանակ աչքի առաջ ունենալով մինչ այս Հայաստանում եղած դառը փորձը՝ Երևանի Բուզանդի փողոցի բնակիչների (Հյուսիսային

<sup>10</sup> *Armenia / Lydian Intl3-01/Gndevaz & Jermuk* (n.d.) [http://www.cao-ombudsman.org/cases/case\\_detail.aspx?id=221](http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=221)

<sup>11</sup> <https://hetq.am/hy/article/85798>

<sup>12</sup> *Միլիոնատեր գնդեվազցիները* (2014.08.26). EcoLur NGO. [վիդեո]. <https://bit.ly/2G0sLMr>

<sup>13</sup> <http://www.armecofront.net/amulsar/ifc-ombudsman/>; <http://www.cao-ombudsman.org/cases/document-links/links-221.aspx/>

<sup>14</sup> *Համաշխարհային բանկի խմբի Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) հրաժարվեց «Lydian Internartional» ընկերության Ամուլսարի ծրագրի ֆինանսավորումից* (2017.09.14) <https://www.ecolur.org/hy/news/amulsar/-ifc--lydian-internartional--/9492/>

<sup>15</sup> *ՀՀ կառավարության՝ 2016 թ. մայիսի 29-ի նիստի օրակարգ, կետ 29, Տեղեկանք-ամփոփաթերթ*. (ա.ս.). E-gov.am. [doc]. [e-gov.am/sessions/archive/2016/05/19](http://e-gov.am/sessions/archive/2016/05/19)

<sup>16</sup> *Ամուլսարյան կրքերը* (2014.08.26). EcoLur NGO. [վիդեո]. <https://bit.ly/2M8mSOc>  
*Գնդեվազցիները չեն ստանում սպասված երաշխիքները* (2017.04.10). EcoLur NGO. [վիդեո]. <https://bit.ly/2ZI33R0>

պողոտայի դեպքում), Թեղուտ և Շնող գյուղի բնակիչների (Թեղուտի հանքի դեպքում) դեմ գործադրված «գերակա շահի» սխեման, ինչպես նաև Գեոթիմ/Լիդիան ընկերության այն հավաստիացումները (ըստ բնակիչների), որ վաճառքի փոխհատուցումը կբավականացի, որպեսզի իրենք բնակարաններ գնեն Երևանում և այդպիսով չկրեն անմիջական բացասական ազդեցություն, հարկադրված վաճառեց իր այգիները/հողերը: 4 հոգու դեպքում ՀՀ կառավարությունը ճանաչեց հանրային գերակա շահ: Հետագայում Գեոթիմ/Լիդիանի կողմից կատարվող աշխատանքների հետևանքները անմիջականորեն կրելով (գյուղի ջրատարի վնասվածքներ, խմելու ջրի աղտոտում, փոշու ծավալներ, միջավայրի աղտոտման հետևանքով անասնապահական խնդիրներ) Գնդեվազի շատ բնակիչներ կրկին բազմիցս կազմակերպել են հանրային բողոքի ակցիաներ:

Ամուլսարում հանքի շահագործման դեմ առաջին և ամենից էական բարձրաձայնումները հնչել են հատկապես առողջարանային Ջերմուկ քաղաքի բնակչությունից, որի կենսամիջավայրը ու սոցիալ-տնտեսական դրությունը ևս ամբողջովին կախյալ են տվյալ հանքի շահագործման որոշումից: Մասնավորապես Ջերմուկի խոշոր, միջին և մանր տնտեսվարողների բիզնեսը և նրանց աշխատակիցների տնտեսական կյանքն ամբողջովին կապակցված է Ջերմուկ քաղաքի առողջարանային բնույթից և համբավից: Դեռևս 2011-ին հանքի նախագծի շուրջ Գեոթիմ/Լիդիանի ներկայացուցիչների հետ առաջին հանդիպումների (ոչ թե հանրային լուսմաների) ժամանակ բնակիչները իրենց բնական միջավայրի աղտոտման բարձր ռիսկայնության մասին գիտական փաստարկներ էին ներկայացնում, հարցեր առաջ քաշում և ներկայացնող կողմի պատասխաններից դժգոհ մնում<sup>17</sup>: Այս քննարկումներին հնչեցվում էր Ջերմուկի բնակչության ստվար մասի անհամաձայնությունը հանքի նախագծին և մերժվում էր հանքի նախատեսվող ապագան:

Ջերմուկ համայնքը և դրա բնակչությունը, սակայն, Գեոթիմ/Լիդիան ընկերության 2009-ից ներկայացվող 4 ՇՄԱԳ-երով զրկված էր մնում ազդակիր համայնք ճանաչվելուց՝ չնայած բնակչության տարիների պահանջներին և ՄՖԿ օմբուդսմենի կողմից 2015-ին հնչեցրած այսպիսի հանձնարարությանը<sup>18</sup>: Դրա հետևանքով այստեղ այդպես էլ տեղի չունեցան իրավական ուժ ունեցող հանրային լուսմաներ: Ազդակիր համայնքի կարգավիճակ Ջերմուկը ձեռք է բերել միայն 2016-ին՝ համայնքների խոշորացման քաղաքականության արդյունքում (Ամուլսարում հանքի ազդակիր Գնդեվազ և այլ գյուղերը իր մեջ ներառելու հետևանքով), ինչպես նաև Լիդիանի կողմից 2016 ՇՄԱԳ փաստաթղթում սոցիալական ազդեցություն կրող համայնք ճանաչվելու արդյունքում: Այդուհանդերձ օրենքով նախատեսված հանրային լուսման Ջերմուկում երբեք չանցկացվեցին:

<sup>17</sup> *Ջերմուկ-Ամուլսար-NO COMMENT* (2011.12.04). EcoLur NGO. [վիդեո]. <https://bit.ly/2GW14nw>

<sup>18</sup> *Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդակցանի (ՀՄՊ) գրասենյակ. Ջեկույց համապատասխանության փորձաքննության մասին* (2015.04.27) [http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/CAOCompliance\\_AppraisalReport\\_Armenia\\_Lyidian-01\\_042715-Armenian.pdf](http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/CAOCompliance_AppraisalReport_Armenia_Lyidian-01_042715-Armenian.pdf)

2015-ին շուրջ մեկ տասնյակ տեղացիներ և երկու բնապահպանական հասարակական կազմակերպություններ սկսեցին դատական գործընթաց՝ փորձելով տեղի դատարաններով հասնել Ամուլսարում հանքի շարագործման թույլատրությունների չեղարկմանը: Բնակիչները և ՀԿ-ները հայց են ներկայացրել վարչական դատարան ընդդեմ երկու նախարարությունների՝ պահանջելով ուժը կորցրած և անվավեր ճանաչել Ամուլսարի շահագործման թույլտվություններ սահմանող փաստաթղթերը:

### «Ամուլսարի պահապաններ» և ՀԲՃ

Ջերմուկցիները (նաև գնդեվազցիները) 2018-ի թավշյա հեղափոխությունից հետո կազմում են իրենց «Ամուլսարի պահապաններ» կոչող տեղացիների հիմնական միջուկը: Նրանք 2018 Հեղափոխությունից ոգեշնչված՝ մայիսի 19-ի<sup>19</sup> և 23-ի<sup>20</sup> երկու փորձերից հետո հունիսի 22-ից անցել են դեպի նախատեսված հանքավայր տանող ճանապարհների ժամանակավոր արգելափակմանը, որը շարունակվում է արդեն շուրջ 14 ամիս: Այս արգելափակմամբ Լիդիանի կողմից Ամուլսարի տարածքում կատարվող դեռևս շինարարական փուլի բոլոր աշխատանքները կասեցվել են: Ըստ տեղացի ակտիվիստների՝ նրանց նպատակն էր Լիդիանին թույլ չտալ անդառնալի հետևանքների և փաստերի առաջ կանգնեցնել համայնքներին և պետությանը, մինչև որ կառավարությունը որոշում կկայացնի և կհանգուցալուծի կոնֆլիկտը<sup>21</sup>: Հատկանշական է, որ տեղացի Ամուլսարի պահապանները մշտապես գտնվել են տարբեր այլ՝ ֆինանսական կամ քաղաքական շահագրգռություններ ունեցողների ուշադրության կենտրոնում՝ շարժումը սեփական շահադիտության անկյան տակ կառավարելի դարձնելու, յուրացնելու նպատակով: Օրինակ, ըստ մեր հարցազրույցներից ստացված տվյալների, այսպիսի փորձ է կատարել Ջերմուկի ջրերի գործարանի սեփականատեր, նախկին պատգամավոր (ՀՀԿ խմբակցություն) Աշոտ Արսենյանը՝ պահապաններին իր հետ հանդիպումների հրավիրելով և իրեն կապակցված անհատներին շարժման մեջ ներգրավելով: Տեղացի ակտիվիստները, սակայն, հրաժարվել են Աշոտ Արսենյանի հետ հանդիպումներից: Պայքարի մեջ որոշակի փուլում ներգրավված եղել է Արսենյանի հետ ֆինանսապես փոխկապակցված անձ, որը հետագայում դուրս է մղվել: Տեղացիների ինքնաբուխ և ներքնաշերտ (grassroots) շարժումը հավասար համագործակցային կապեր ունի միայն Համահայկական բնապահպանական ճակատի<sup>22</sup> (ՀԲՃ) հետ, որը կրկին քաղաքացիական նախաձեռնություն է, ձևավորվել է տարբեր բնապահպանական շարժումների (Թռչկանի, Թեղուտի) և հանրային շահի պաշտպանության քաղաքացիական

<sup>19</sup> «Ծորակներից դարչնագույն հեղուկ է հոսում»․ գնդեվազցիները փակել են դեպի Ամուլսար տանող ճանապարհը (2018.05.19)․ Epress.am. <https://bit.ly/2MZJpg5>

<sup>20</sup> Ջերմուկ համայնքը պնդում է Ամուլսարի հանքը չպետք է շահագործվի (2018.05.23)․ Lragir AM. [վիդեո]․ <https://bit.ly/2OGFLtM>

<sup>21</sup> *How citizens battling a controversial gold mining project are testing Armenia's new democracy* (2018.08.07) <https://www.opendemocracy.net/en/odr/citizens-battling-a-controversial-gold-mining-project-amulsar-armenia>

<sup>22</sup> <http://www.armecofront.net/>



պայքարների ընթացքում: Նրանց վերջին տարիների գործունեությունը ուղղված է Ագարակի, Լիճքի, Քաջարանի հանքերի խնդիրների բարձրաձայնմանը, աջակցել են Արդվի և Վազաշեն համայնքներում հանքի բացման հեռանկարի կասեցմանը և այլն: Մշտապես բարձրաձայնում են նաև ՀԷԿ-երի, անտառահատումների և այլ բնապահպանական խնդիրների մասին: Ամուլսարի պահապանները նաև տեղեկատվական և իրավական աջակցություն են ստանում Էկոլուր<sup>23</sup> և Հայաստանի անտառներ<sup>24</sup> ՀԿ-ների կողմից:

### Բնակիչների հանրագրերը

Բացի շարժման կորիզը հանդիսացող տեղացի Ամուլսարի պահապաններից և բնապահպան ակտիվիստներից (ի դեմս ՀԲՃ-ի), անցյալ տարվանից ընդլայնված շարժմանն աջակցում են նաև Հայաստանի իրավապաշտպան համայնքի կազմակերպություններ և անհատներ<sup>25</sup> և Վայոց Ձորի մարզի բնակչության սովոր մասը: Վերջինիս վկայություններն են 2018 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 2019 թ. մայիս ամիսներին կազմակերպված հանրագրերը, որոնք **Ջերմուկ, Գլաձոր, Արենի** և **Շղեգնաձոր** համայնքներում ընտրություններին մասնակցած բնակիչների ճնշող մեծամասնության (շուրջ 12 հազար) ստորագրություններով պահանջում էին ավագանիներին իրենց համայնքներում մետաղական հանքարդյունաբերությունն արգելող որոշում կայացնել և զարգացնել կանաչ տնտեսություն, միաժամանակ՝ բոլոր հանրագրերում հղում է տրվում Ամուլսարին, որտեղ հանքի բացումն անթույլատրելի է գնահատվում<sup>26</sup>: Չորս համայնքների ավագանիները ընթացք տվեցին հանրագրի պահանջին և համապատասխան որոշումներ ընդունեցին: Հանրագրերի գործընթացը շարունակվում է Վայոց Ձորի մարզի այլ համայնքներում:

Խնդրի հանգուցալուծման առումով տեղացիների ակնկալիքները կառավարությունից և մարզային իշխանություններից չափազանց բարձր են, սակայն մինչ այժմ ստացած արձագանքների հանդեպ հիասթափության նախանշաններ կան: Վերոնշյալ հանրագրերի գործընթացը նաև ոգեշնչված էր Հեղափոխության օրերին և դրանից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձով, որ Հայաստանում պետք է հզորանան տեղական նախաձեռնությունները և ուղիղ ժողովրդավարությունը և որ մարդիկ պետք է հանրաքվեներով և ստորագրություններով իրենց քաղաքական տեսակետներն արտահայտելու և իրացնելու հնարավորություններ ստանան, իսկ կառավարությունն էլ անպայման դրա հետ հաշվի կնստի: Այդուհանդերձ, պետական հաստատություններից

<sup>23</sup> <https://econews.am/>

<sup>24</sup> <https://www.facebook.com/armenianforests/>

<sup>25</sup> Աջակցություն Ամուլսարի հանքի դեմ պայքարողներին. ԱՄՆ անկախության տոնին՝ կանաչ ժապավեններով (2018.07.04). Epress.am.<https://bit.ly/2YTTrDIP/>: Այս խմբի մասին առավել մանրամասն տե՛ս հաջորդ բաժնում:

<sup>26</sup> *Գլաձորի ավագանին մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ հանրագրին հավանություն է տվել. ՀԲՃ* (2019.05.06) <https://www.aravot.am/2019/05/06/1040786/>

*Շղեգնաձորը ևս մերժեց մետաղական հանքարդյունաբերությունը* (2019.05.28) Econews.am <https://econews.am/?p=10812&l=am> և այլն:

հակառակ ազդակներ հղվեցին: Օրինակ, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից Ջերմուկի ավազանուն գրություն ուղարկվեց, որում առաջարկվում էր չեղարկել վերոնշյալ որոշումը (ավազանին մերժեց<sup>27</sup>): Քայլը հիմնավորվում էր ՀՀ օրենսդրությանը և Սահմանադրությանը դրա անհամապատասխանությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթն ու լիազորությունները պատշաճ կատարելու հրամայականով<sup>28</sup>: Հետագայում Վայոց Ձորի մարզպետը ընդդեմ Գլաձորի ավազանու հայցով դիմել էր դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել մետաղական հանքարդյունաբերությունն արգելող համանման որոշումը. դատարանն այս հայցը օգոստոսի 2-ին վերադարձրել է<sup>29</sup>: Տեղացիներն ու բնապահպանները սա որակում են որպես համայնքների ավազանիների և ՏԻՄ նկատմամբ քաղաքական ճնշում:

### ***Հեղափոխության սոցիալական հենարանի խնդիրը***

Հեղափոխությունը և Հայաստանի ժողովրդավարացման գործընթացը՝ ի դեմս ՀՀ նոր կառավարության, ունի կոնկրետ սոցիալական հենարան: Հատկանշական է, որ նոր կառավարությունը չունի օլիգարխիայի և ուժայինների պաշտպանության այն աստիճանը, ինչն ուներ նախկին ռեժիմը, որի վրա էլ հիմնվում էր դրա կառավարման երկարակետությունը և քաղաքականությունների հակաժողովրդական բնույթը:

Նոր կառավարությանը և դրա ռեֆորմներին աջակցող սոցիալական հենարանը մեծ հաշվով բաղկացած է հետևյալ երեք կարևոր սոցիալական շերտերից, որոնք այս կամ այն չափով նաև ընդգրկված են Ամուլսարի շարժման մեջ՝

1. փոքրաթիվ, սակայն լավ կազմակերպված քաղաքացիական-իրավապաշտպան, բնապահպան, հանրային շահերի պաշտպանության խմբերը<sup>30</sup>,
2. Հայաստանի միջին խավը կազմող տնտեսապես ակտիվ շերտը (այդ թվում՝ փոքր և միջին բիզնեսի սեփականատերերը և դրանցում զբաղվածները)<sup>31</sup>
3. մեծաթիվ ժողովրդական խմբերը՝ սովորական քաղաքացիները<sup>32</sup>:

<sup>27</sup> <http://ecolur.org/hy/news/cities/---/10804/>

<sup>28</sup> <https://hetq.am/hy/article/100488>

<sup>29</sup> *Դատարանը վերադարձրել է Վայոց Ձորի մարզպետի հայցը ընդդեմ Գլաձորի ավազանու՝ հանքարդյունաբերությունն արգելելու որոշման* (2019.08.05) <https://infocom.am/?p=11703>

<sup>30</sup> Հեղափոխական գործընթացում այս խմբերի դերակատարության մասին տե՛ս այստեղ՝ <http://socioscope.am/archives/1462/>:

<sup>31</sup> Այս խմբի շրջանակը լիարժեք և առավել մանրամասն հասկանալու համար լրացուցիչ ուսումնասիրության կարիք կա:

<sup>32</sup> Այս մասին վկայում են մի քանի հրապարակված և դեռևս չհրապարակված հետազոտություններ

Առաջին շերտը տիրապետում է Ամուլսարի խնդրին, ակտիվ հետևում է և մասնակցում է գործընթացին: Հեղափոխությունից անմիջապես հետո մի խումբ իրավապաշտպաններ հանդես են եկել տեսանելի ակցիաներով, անգամ սեփական գործունեությանը ֆինանսապես և քաղաքականապես աջակցող իրենց գործընկեր ԱՄՆ և Բրիտանիայի դեսպանատներին ուղղված կոչով՝ աջակցել Հայաստանի հանրությանը և ժողովրդավարությանը նաև Ամուլսարում հանքարդյունաբերությունը կասեցնելու կարևոր պայքարում<sup>33</sup>: Իրավապաշտպանների խմբի շատ անդամներ լիովին սատարում է Ամուլսարի շարժմանը, հանդես է գալիս որպես հանքի կասեցման ակտիվ կողմ: Այս խմբի մեծ մասի դիրքորոշման հիմքում ընկած է *ազդակիր համայնքների սոցիալական, տնտեսական և հիմնարար-ֆունդամենտալ իրավունքների պաշտպանության կարևորումը և Հայաստանում ժողովրդավարության և քաղաքացիական հանրության զարգացմանն աջակցությունը*: Առավել փոքր մասի դիրքորոշման հիմքում ընկած է *Հայաստանի և աշխարհի մյուս երկրների ու միջազգային քաղտնտեսական կառույցների հետ հավասար հարաբերությունների ու արժանապատիվ ինքնիշխան քաղաքականության հասնելու* ձգտումը, ինչպես նաև *միջազգային գլոբալ ֆինանսական օլիգարխիայի անօրինականություններից Հայաստանի ժողովրդի շահերը պաշտպանելու* առաջանահերթությունը:

Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ խմբերին՝ միջին խավի տնտեսվարողները և ժողովրդական լայն շերտերը/խմբերը (կամ դրանց տեղեկացված մասը), ունեն Ամուլսարի շարժման սատարող դիրքորոշումներ, սակայն միաժամանակ նոր կառավարությանը հարվածի տակ չդնելու մտավախություններ: Այս նույն սոցիալական շերտերը Ամուլսարի կոնֆլիկտում առավել արմատականորեն ներգրավված են հատկապես ազդակիր համայնքների, մասնավորապես՝ Ջերմուկ քաղաքի և Գնդեվազ գյուղի բնակչության մասով: Ամուլսարի շարժմանը մասնակցելու և/կամ աջակցելու նրանց ակտիվ և նախաձեռնող դիրքորոշման հիմքում ընկած է *սեփական համայնքներում առկա տնտեսական կառուցվածքի և առողջարանային ու բնական գոտու պահպանության ձգտումը, համայնքների տնտեսական շահերի, համայնքների բնակիչների կյանքի և առողջության իրավունքի, սեփականության իրավունքի պաշտպանությունը*: Սրա փաստական ապացույցն են հանդիսանում տեղի համայնքների ուժերով նախատեսված հանքավայր տանող ճանապարհների արգելափակման տևական (14 ամիս) քաղաքացիական ակցիան և դրան սատարումը, ակտիվ և մեծաթիվ մասնակցությունը Ամուլսարի պաշտպանության և ցանկացած մետաղական հանքերի նախագծերի կանխարգելման նպատակով 2018-2019 թվականին կազմակերպված հանրագրերին (Ջերմուկում՝ շուրջ 3000 քաղաքացի, Վայոց Ձորում՝ շուրջ 12000 քաղաքացի): Բացի դրանից, տարբեր առիթներով կոնֆլիկտի թեժացումների ժամանակ շերտուկցիները ցուցաբերել են արագ մոբիլիզացվելու պրակտիկա:

<sup>33</sup> Աջակցություն Ամուլսարի հանքի դեմ պայքարողներին. ԱՄՆ անկախության տոնին՝ կանաչ ժապավեններով (2018.07.04). Epress.am. <https://bit.ly/2YTrDIP>

նույնը տեղի ունեցավ օգոստոսի 14-ին՝ ՀՀ քննչական կոմիտեի աասուլիսից հետո Ջերմուկում ինքնաբուխ քաղաքացիական հավաքի, հաջորդ օրվա երթի տեսքով:

### ***Ամուլսարի կոնֆլիկտում շահագրգիռ ներքաղաքական կողմերը***

Ամուլսարի խնդրում ակտիվ շահագրգռություն են ցուցաբերում նաև քաղաքական կուսակցությունները և ուժերը: Արմատական ազգայնական ուժերը, մասնավորապես՝ Սասնա ծռերը, Ամուլսարի շարժման շահագրգիռ, սակայն քիչ տեսանելի մասն են հանդիսանում: Նրանց ակտիվությունը և տեսանելիությունը զսպվում է շարժման ժողովրդավարամետ և բռնությունը մերժող քաղաքացիական խմբերի և տեղացիների կողմից<sup>34</sup>: Վերջիններս չեն ցանկանում Ամուլսարի հարցում կուսակցական դիվիդենտներ շնորհել որևէ այլ կուսակցական-քաղաքական խմբավորման, քան իրենց կողմից վստահություն վայելող վարչապետ Նիկոլ Փաշինյանի քաղաքական ուժին: Այս մասին տեղացիները հստակ ընդգծել էին նաև օգոստոսի 16-ին վարչապետին ուղղված իրենց բաց նամակում<sup>35</sup>:

Այս խնդրին ոչ թե կուսակցական և/կամ ֆինանսական իշխանության դիրքերի տեսանկյունից, այլ հանրային շահի պաշտպանության և ըստ իր էության են մոտենում ոչ միայն տեղացիները, բնապահպանները, իրավապաշտպանները (որոշ չափով նաև ազգայնական սենտիմենտներ տածող խմբերը), լայն հանրության տեղեկացված հատվածները, այլև նոր ձևավորվող արտախորհրդարանական քաղաքական ընդդիմադիր մեծ ու փոքր խմբերը (այդ թվում՝ «Քաղաքացու որոշում» ՄԴԿ): Վերջիններս կտրուկ դեմ են արտահայտվել Ամուլսարում հանքի շահագործմանը<sup>36</sup>:

ԱԺ ընդդիմադիր ԲՀԿ-ն և Լուսավոր Հայաստանը այս հարցում չեն շտապում դիրք գրավել: Վերջինիս ղեկավարը հասցրել է հանդես գալ իբր չեզոք՝ երկակի խուսափողական արտահայտություններ անելով<sup>37</sup>:

Որոշ հայաստանյան լիբերալ քաղաքական ուժեր ևս առայժմ լուռ կամ չեզոք դիրքավորման մեջ են: Նրանց վերադիրքավորումը մեծ հավանականությամբ ցանկացած պահի կարող է փոխակերպվել՝ կախված գործող ուժային հավասարակշռությունից: Մասնավորապես ՀԱԿ-

<sup>34</sup> *Կյանքի գնով էլ լինի՝ Ամուլսարի հանքը չի շահագործվելու. բնապահպանները վճռական են* (2018.07.06). 1in TV. [վիդեո].<https://bit.ly/2M67Vwf>

<sup>35</sup> Ջերմուկցիները Փաշինյանից հանդիպում են պահանջում (2019.08.16).

[https://www.lragir.am/2019/08/16/467903/?fbclid=IwAR1H1CRPzIQVbauTrWIEWKs9mYH8z\\_Q3EQTj2TboGynNsDRonDHZLbo-LYM](https://www.lragir.am/2019/08/16/467903/?fbclid=IwAR1H1CRPzIQVbauTrWIEWKs9mYH8z_Q3EQTj2TboGynNsDRonDHZLbo-LYM)

<sup>36</sup> *Ամուլսարը չի կարելի շահագործել. Միքայել Նահապետյան* (2019.08.15). Civilnet.am.  
<https://bit.ly/2OYzf1A>

<sup>37</sup> *Նիկոլ Փաշինյանին 10-բալանոց համակարգով 5 ենթ նշանակում. Էդմոն Մարության* (2019.08.16)  
<https://youtu.be/fcNuACD2Hio?t=143>

ին առնչվող անհատներ կան, որ հանքի շահագործմանը այս կամ այն փուլում դեմ են արտահայտվել, սակայն կուսակցության վրա նրանց ազդեցության և կուսակցական դիրքորոշումը ձեռքբերելու մասին տվյալներ չկան:

Նախկին քաղաքական իշխանության մաս կազմակա՞ծ ՀՀԿ և Դաշնակցություն կուսակցությունները Ամուլսարում հանք շահագործելու հարցում ուղղակի մասնակից կողմեր են եղել: Եթե ՀՀԿ-ն նախագահի և վարչապետի մակարդակով են պատասխանատու այս որոշումների համար, ապա Դաշնակցությունը՝ բնապահպանության նախարարի պորտֆելով, որ տնօրինել է 2014-2016-ը՝ Արամայիս Գրիգորյանի և 2016-2018-ը՝ Արծվիկ Մինասյանի կառավարմամբ<sup>38</sup>: Չնայած Դաշնակցության ազգայնական ուղղվածությունը կենթադրեր լինել տեղացիների հողերի և ջրերի պաշտպանությանն առնչակից հարցի պաշտպանության կողմում, սակայն նրանց կոալիցիոն կառավարման օրոք են ընթացել գնդեվազցիների հողերի օտարումը և շինարարական աշխատանքների գործարկումը, ինչպես նաև Լիդիանի կողմից Ջերմուկ ազգային պարկը ստեղծելու և 5.7 մլն դոլար ստանալու մասին խիստ վիճելի հուշագրի ստորագրումը<sup>39</sup>: Ամուլսարի ծրագրի կասեցումն իբրև ներդրումային միջավայրի վատթարացում են որակում 2018 Հեղափոխությամբ իշխանությունից զրկված ՀՀԿ ներկայացուցիչները<sup>40</sup>:

Ռոբերտ Քոչարյանին մերձ քաղաքական մյուս ուժերը ևս, համարվում է, որ գրավում են հանքի շահագործման կողմնակիցների դիրքը: Նրանց վերահսկողության տակ գտնվող մեղիա կառույցները ակտիվորեն լուսաբանում են Ամուլսարի շարժումը՝ նպատակ ունենալով, սակայն, ցուցադրել և ահագնացնել հեղափոխական կառավարությունից դժգոհությունները: Միաժամանակ նույն Քոչարյանի անվան հետ կապվող մեղիահարթակները հրապարակում են Լիդիանի և հանքի նախագծի մասին գովազդային բնույթ ունեցող, հնարավոր է պատվիրված հոդվածներ: Քոչարյանն անձամբ համարվում է Հայաստանում հանքարդյունաբերության կնքահայրը և որոշ հանքերի ստվերային սեփականատերերից մեկը: Քոչարյանը 2018 թ. հոկտեմբերի 25-ին «Հայոց աշխարհին» տված իր հարցազրույցում քննադատել էր Գեոթիմ/Լիդիանի աշխատանքների կասեցմանն ուղղված ճանապարհների արգելափակումը՝ լեռնահանքային արդյունաբերության մեջ ներդրումային

<sup>38</sup> *Ամուլսարը կարող է լինել տնտեսական զարգացման և բնապահպանության համատեղման լավ օրինակ. Արծվիկ Մինասյան* (2018. 12.21). <https://analitik.am/news/view/449557>

<sup>39</sup> Լիդիան Արմենիայի կողմից ազգային պարկ ստեղծելու գաղափարի անընդունելիության, ծրագրի ֆինանսական անհամաչափության, կենսաբազմազանության պահպանության խնդիր չլուծելու և հետևաբար հարցեր առաջացնելու մասին, տե՛ս Bankwatch միջազգային կազմակերպության հատուկ զեկույցը Ամուլսարի ծրագրի և կենսաբազմազանության մասին <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-2-Biodiversity-min.pdf>, ինչպես նաև՝ WWF Armenia կազմակերպության նախագահ Կարեն Մանվելյանի զեկույցը <https://www.ecolur.org/hy/news/mining/---/10510/>

<sup>40</sup> *Եթե «Լիդիան Արմենիան» դիմի արբիտրաժ և հաղթի, «ներդրումներ խրախուսող» կառավարությունից ՀՀ բյուջեի 50%-ի չափով փոխհատուցում կստանա. Արփինե Հովհաննիսյան*, (2019.02.19) <https://www.tert.am/am/news/2019/02/19/Arpine-hovhannisyanyan/2926435>

ծրագրերի հետանկարի շուրջ մտահոգություն հայտնելով: Միաժամանակ ակտիվիստներին իր խոսքերով ուղղորդում էր ճնշումները բանեցնել ոչ թե բիզնես կազմակերպության, այլ ուղիղ կառավարության վրա: Որոշ փորձագետներ վստահ են, որ Քոչարյանն անձնական տնտեսական շահագրգռություն ունի Ամուլսարում հանքի շահագործման մեջ՝ միջնորդված ռուսական կապիտալով: Բնապահպանների հետաքննությունը ևս ցույց է տալիս, որ Քոչարյանի ընտանիքի անդամներն առնվազն ներգրավվածություն ունեն Ամուլսարի հանքի շինարարական աշխատանքներում՝ որպես կապալառուներ:<sup>41</sup> Հարցված լրագրողները Քոչարյանին Գեոթիմ/Լիդիանի հետ կապակցող նշաններ են համարում նաև թիմերի անդամների միջև եղած անձնական կապերը (Քոչարյանի բիզնեսի կառավարիչներից մեկը ամուսնական կապի մեջ է Գեոթիմ/Լիդիանի լրատվական և ջատագովական աշխատանքը համակարգող անձի հետ):

Առկա են նաև այլ հին քաղաքական-կուսակցական ուժերի խմորումներ, որոնց նպատակն է գրոյացնել Հեղափոխության հեղափոխական բնույթը և Ամուլսարի հարցում հանրային ցասումը ուղղորդել անմիջապես վարչապետ Նիկոլ Փաշինյանի, նրա կառավարության և կառավարող քաղաքական ուժի դեմ: Այս խմբի դրսևորումները տեսանելի են Զարուհի Փոստանջյանի և իր կուսակիցների քաղաքական ելույթներում<sup>42</sup>:

Այս և հարակից ուժերը կարող են օգտագործել Ամուլսարի կոնֆլիկտի շուրջ ցանկացած լարում՝ պատրաստ լինելով թեմայի շուրջ կրքեր բորբոքել և խնդիրը հանգեցնել ճգնաժամի, սակայն ոչ թե Ամուլսարում հանքը բացառելու, այլ գործող կառավարության դեմ բողոքներ, կասկածներ և անվստահություն հրահրելու, կառավարության և քաղաքացիական/ժողովրդական խմբերի միջև ճեղքեր առաջացնելու և մեծ հաշվով Հեղափոխությունը չեղարկելու նպատակով:

### ***Ամուլսարի կոնֆլիկտում շահագրգիռ արտաքին կողմերը***

#### **Սփյուռք**

Ինչ վերաբերում է արտաքին ներգրավված կողմերին, ապա խոսքը նախ և առաջ սփյուռքի մասին է: Մասնավորապես Հայաստանի ժողովրդավարացման և հանրային շահերի պաշտպանությամբ հայտնի անվանի և ազդեցիկ գործիչներ, ինչպիսիք են օրինակ՝ Սերժ Թանկյանը և Արսինե Խանջյանը, Սեդա Գալրանյան-Մելքոնյանը նախկինում աջակցել են և այժմ էլ աջակցում են Ամուլսարի շարժմանը: Բոլորովին վերջերս Սերժ Թանկյանը կրկին

<sup>41</sup> Ինչու է մեղադրյալ Քոչարյանը պաշտպանում Լիդիանին (2019.01.19)

<http://www.armecofront.net/amulsar/qocharyan-lydian/>

<sup>42</sup> 2018.08.15 դրությամբ Զարուհի Փոստանջյանը կիսվել էր իր կուսակից Դավիթ Հակոբյանի խոսքերը, որոնցում հանրությանը կոչ է արվում ճիշտ ընտրել պայքարի թիրախին և հասկանալ, որ հեղափոխություն չի եղել:

հանրային խոսքով էր հանդես եկել և կոչ արել աջակցել Ամուլսարի շարժմանը<sup>43</sup>: Մյուս կողմից սփյուռքյան ինստիտուցիոնալ մարմինների ներկայացուցիչների շարքում կան ազդեցիկ մեծահարուստ գործիչներ, որոնք, ըստ բնապահպանների, ֆինանսական շահեր ունեն Գեոթիմ/Լիդիանի հանքարդյունահանող նախագծում՝ հանդիսանալով ներդրումներ կատարած կամ վարկատու կազմակերպությանն առնչվող կողմեր, մասնավորապես հնչում են Հայկական ընդհանուր բարեգործական միության (AGBU) հետ առնչություն ունեցող՝ ներդրումային ֆինանսիստ Ժոզեֆ Ուդուրյանի, IDEA հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Վարդանյանի, կանադահայ Վահան Քոլոյանի անունները<sup>44</sup>:

### Արևմուտք-Ռուսաստան

Ամուլսարի հանքի շահագործումը ունի նաև աշխարհաքաղաքական ենթատեքստ: Այն արևմտյան կապիտալի ներգրավման շնորհիվ, բնականաբար, ունի արևմտյան երկրների աջակցությունը: Հեղափոխությունից հետո ԱՄՆ գործող դեսպան Ռիչարդ Միլսը հանդիպել էր ժամանակավոր կառավարության փոխվարչապետ Տիգրան Ավինյանին: Ըստ պաշտոնական հաղորդագրության, գործիչները քննարկել են Հայաստանում ամերիկյան ներդրումների և դրամաշնորհների հնարավորությունները, մասնավորապես «Հազարամյակների մարտահրավերներ» ծրագրի նոր համաձայնագրի համար Հայաստանի մրցունակության հարցը: Միաժամանակ նշվում է, որ «ԱՄՆ դեսպանը կարևորեց նաև Լիդիան-Արմենիա ընկերության, որպես միջազգային խոշոր ներդրումային ծրագրի, գործունեության շարունակականությունը»<sup>45</sup>: Նույն դեսպանը հետագա մեկ այլ հանրային ելույթում արդեն առավել ուղիղ տեքստով կապակցել էր Լիդիան-Արմենիայի գործունեության շարունակականությունը Հայաստանի տնտեսությունում ԱՄՆ ներդրումների հնարավորության հետ՝ համաձայն ԱՄՆ քաղաքականության թափանցիկորեն ցույց տալով ԱՄՆ կառավարության աջակցությունը իր երկրին առնչվող ներդրողների կապիտալին<sup>46</sup>:

Ինչպես ԱՄՆ, այնպես էլ՝ Միացյալ Թագավորության դեսպանության ներկայացուցիչները և դեսպանները 2013-ից սկսած, ի պաշտոնե, հանդես են եկել Լիդիանի պաշտպանությամբ ինչպես հրապարակային ելույթներով, այնպես էլ դիվանագիտական, աշխատանքային հանդիպումներով ՀՀ կառավարության տարբեր անդամների, բնապահպանական հարցերով

---

<sup>43</sup> ԱՄՆ-ն, Բրիտանիան և Կանադան ճնշել են Հայաստանին Ամուլսարի հարցում. Թանկյանի հայտարարությունը (2019.08.04) <https://armeniasputnik.am/world/20190804/19933049/amn-n-britanian-u-kanadan-jnshelen-hayastanin-tankyani-haytararutyuny.html>

<sup>44</sup> Տե՛ս Հայկական բնապահպանական ճակատի հետաքննությունը, <http://www.armecofront.net/lrahos/gteq-baregorcneri-kapy-hanqakermeri-het/>

<sup>45</sup> Փոխվարչապետ Տիգրան Ավինյանը և ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը հանդիպում են ունեցել (2018.06.14). <https://gov.am/am/news/item/13572>

<sup>46</sup> ԱՄՆ դեսպան. Հավանական ներդրողները հետեւում են «Լիդիան»-ի գործին (2018.07.18). <https://banks.am/am/news/newsfeed/15857>

որոշում կայացնող պետական հիմնարկների տնօրենների<sup>47</sup> և հասարակայնության ներկայացուցիչների հետ: Վերջին տարիներին Լիդիանը հանդես է եկել դեսպանությունների միջոցառումների հովանավորի դերում՝ ցուցադրելով վերջիններիս հետ համագործակցային աջակցությունը: 2012-2014 թթ. Միացյալ Թագավորության դեսպաններ ամուսիններ Ջոնաթան Էյվզը և Քեթրին Լիչը առանձնահատուկ ակտիվություն են դրսևորել Գեոթիմ/Լիդիանին և Ամուլսարում հանք բացելու ծրագիրը պաշտպանելու հարցում<sup>48</sup>: Ավարտելով իր դիվանագիտական կարիերան՝ Ջոնաթան Էյվզը 2017-ին շարունակել է իր գործունեությունը Ամուլսարի ծրագրի ֆինանսավորող խոշոր բանկերից մեկում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում՝ զբաղեցնելով բարձր պաշտոն<sup>49</sup>:

Հենց այս նույն պատճառով հանքի շահագործման հարցում, թվում է, հակադիր դիրքում է Ռուսաստանի Դաշնությունը՝ թույլ չտալու համար Հայաստանի տնտեսության մեջ արևմտյան կապիտալի ակտիվացումը և գերիշխող ռուսական կապիտալի նահանջը: Ռուսաստանի Դաշնության գործողություններին հետևելը դյուրին չէ, քանի որ նրանց դիվանագիտական կորպուսն, ի տարբերություն արևմտյանների, հակված չէ հանրայնացնել իր կողմից տարվող բանակցություններն ու քայլերը: Ամեն դեպքում, երկրների դիրքավորումները ավելի քան ոչ միանշանակ է, քանի որ ռուսահայ կապիտալը հանձին Ռուբեն Վարդանյանի և նրան առնչվող Ամերիա բանկի, ևս շահագրգիռ կողմ է Ամուլսարում հանքի շահագործման մեջ<sup>50</sup>: Վերջինս հանդիսանում է Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրի վարկատուն 2016 նոյեմբերից: Ռուսական կապիտալ ունեցող մեկ այլ գործորդի դեպքում, Ջանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատի մասով էլ ավելի կոնկրետ շահագրգռության մասին լուրեր կան<sup>51</sup>: Սա հիմնականում պայմանավորված է դրա նախկին ղեկավար, Սյունիքի նախկին մարզպետ և նախկին ԱԱԾ աշխատակից (1997-2000) Վահե Հակոբյանին<sup>52</sup> վերագրվող շահագրգռության հետ, ով իրեն անձնական առնչություն ունեցող մեդիա կառույցների (մասնավորապես կնոջ տնօրինության տակ գտնվող para.tv-ի) տեղեկատվական քաղաքականությամբ աջակցում է Ամուլսարի շուրջ խնդիրների բարձրաձայնմանը: Վահե Հակոբյանի անվան հետ կապակցված ԶՊՄԿ-ի շահագրգռությունը որոշ փորձագետներ և լրատվամիջոցներ դիտարկում են մրցակցության անկյան տակ: Համարվում է, որ նրանց պայքարը ոչ թե առհասարակ Ամուլսարում հանքի շահագործման

<sup>47</sup> Միացյալ թագավորության լրագրողներից մեկի հարցմանն ի պատասխան ՄԹ աստործնախարարությունը հայտնել է, որ միայն 2013թ. Միացյալ թագավորության դեսպանները չորս հանդիպում են ունեցել ՀՀ ջրային կոմիտեի հետ Ամուլսարի հանքի ծրագրի կապակցությամբ: Այլ մանրամասներ չեն նշվում: Հարցումը և պատասխանը հանրայնորեն հրապարակված չեն:

<sup>48</sup> *Մեծ Բրիտանիայի դեսպանն ու Բնապահպանության նախարարը խոսել են Ամուլսարի մասին* (2013.06.25). <https://www.aysor.am/am/news/2013/06/25/harutyunyan-lich/632539>

<sup>49</sup> <https://www.ebrd.com/who-we-are/senior-management/jonathan-aves.html%20>

<sup>50</sup> *«Գտեք բարեգործների կապը հանքակերների հետ»*. Բնապահպանները՝ Ամուլսարի մասին (2017.02.14). Epress.am. <https://bit.ly/2LXPavi>

<sup>51</sup> <https://www.lin.am/2366255.html>:

<sup>52</sup> [https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B0%D5%A5\\_%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%B5%D5%A1%D5%B6\\_\(%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%BA%D5%A5%D5%BF\)](https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%B0%D5%A5_%D5%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2%D5%B5%D5%A1%D5%B6_(%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%BA%D5%A5%D5%BF))



դեմ է, այլ արևմտյան կապիտալ ունեցող Լիդիանի կողմից շահագործվելու դեմ է, որին արտամղելու դեպքում, կարող է փորձել զբաղեցնել դրա տեղը: Մյուս կողմից, սակայն, ԶՊՄԿ-ի հետ առնչություն ունեցողների անունների շարքում է հնչեցվում Ռոբերտ Քոչարյանը<sup>53</sup>, որն ինչպես տեսանք վերևում, աջակցում է հանքարդյունաբերությանը և դեմ է Լիդիանի գործունեությունը ժամանակավոր սահմանափակող գործողություններին:

Հետևաբար, Ամուլսարի խնդիրը ոչ թե աշխարհաքաղաքական է պետությունների, այլ դրանց պաշտպանության կամ շահագրգռության ներքո գտնվող կապիտալի և դրանք տնօրինող անհատների շահերի անկյան տակ: Հետևաբար Ամուլսարում հանքի շահագործման հարցը չի կարող հանգեցվել ԱՄՆ-Ռուսաստան, արևմուտք-հյուսիս աշխարհաքաղաքական լարումների մեջ Հայաստանի դիրքորոշման հարցին: Տնտեսական առումով այս կոնֆլիկտի մի կողմում կանգնած է ամերիկյան, անգլիական, կանադական, ռուսական կապիտալ, մյուս կողմում՝ հայաստանյան մասշտաբներով խոշոր կապիտալ (Ջերմուկի հանքային ջրերի գործարանատերեր), խոշորացված Ջերմուկ համայնքի միջին և փոքր ձեռնարկատերերի տնտեսական ռեսուրսներ, համայնքի զբաղված բնակիչների տնտեսական կյանքի միջոցներ:

Հարցին զուտ աշխարհաքաղաքական իմաստ է փորձում հաղորդել Լիդիան ընկերությունը, պարբերաբար հրապարակելով, որ Ամուլսարի հանքի ծրագրին դիմադրող բնապահպանները, ավելի ուշ՝ տեղացիները սպասարկում են օտարերկրյա շահերի: Հանքի ծրագրին դեմ լինելով Թուրքիայի և Ադրբեջանի օրակարգին նպաստելու մասին խոսել է Լիդիանի տնօրեն Հայկ Ալոյանը իրեն մշտապես հարթակ տրամադրող լրատվամիջոցի՝ Մեդիամաքսի հետ հարցազրույցում դեռևս 2016-ին<sup>54</sup>: Ադրբեջանի և Ռուսաստանի օգտին գործելու մասին պարբերաբար գրում է նաև Լիդիանին ուղիղ աջակցող, «ԱդեկվաԴ» կոչվող խմբավորմանն առնչվող Անալիտիկ կայքը՝ անհեղինակ իր հոդվածներում<sup>55</sup>: Արդեն տեղացիների կողմից հանքի ճանապարհները փակելուց հետո 2018 հոկտեմբերին Հայկ Ալոյանը մամուլում կրկին հնչեցնում է այն միտքը, որ «Ամուլսարի խնդիրը բնապահպանական չէ, որ «պանիկան» հրահրողները ուղղորդված են այլ ուժերի կողմից»<sup>56</sup>: Հաճախ է հնչեցվում անհիմն այն վարկածը, որ Ամուլսարի հանքի ծրագրի դեմ շարժումը պայմանավորված է շահագործման թույլտվությունները արևմտյան ընկերությունից վերցնելու և այլ, հաճախ՝ ռուսաստանյան ընկերության հանձնելու շարժառիթով<sup>57</sup>, ինչը սակայն չի համապատասխանում ճշմարտությանը: Ամուլսարի շարժման կորիզը կազմող

<sup>53</sup> <https://hetq.am/hy/article/92273>

<sup>54</sup> Հայկ Ալոյան. «Ադրբեջանի ու Թուրքիայի արձագանքը չի զարմացնում». (2016.08.15).

<https://mediamax.am/am/news/interviews/19401/>

<sup>55</sup> Ինչո՞ւ է Ադրբեջանին և ՌԴ-ին մտահոգում «Ամուլսար»-ի ոսկու հանքը, 05. 02. 2018

<https://analitik.am/news/view/385210>, Ամուլսարի դեմ իրականացվող արշավի հեղինակներն ու պատվիրատուները, (2018.02.28). <https://analitik.am/news/view/389859> և այլն:

<sup>56</sup> Ամուլսարի խնդիրը բնապահպանական չէ. գիտենք «պանիկան» հրահրողներին. «Լիդիան Արևելք»-ի տնօրեն, [https://www.youtube.com/watch?time\\_continue=9&v=F1BtrOAOyBw](https://www.youtube.com/watch?time_continue=9&v=F1BtrOAOyBw),

<sup>57</sup> Ով է վարակված Ամուլսարի ոսկու տենդով, 06. 06. 2018, <https://www.1in.am/2366255.html>

տեղացիները և բնապահպաններն իրականում ջանում են հասնել ոչ թե Լիդիանի աշխատանքի կասեցմանը, այլ Ամուլսարում որևէ մեկի կողմից հանքի շահագործման բացառմանը: Շարժման բնապահպան մասնակիցները հայտնի են նաև այլ հանքերի, այդ թվում՝ ԶՊՄԿ-ի դեմ իրենց գործունեությամբ:

### Միջազգային շարժումներ

Ամուլսարի շարժումը վայելում է նաև միջազգային իրավապաշտպան և բնապահպան շարժումների և Հայաստանի ժողովրդավարացմանը աջակցողների ուշադրությունը: Այն թերևս մինչ օրս ամենամեծ միջազգային սոլիդարություն վաստակած պայքարներից է Հայաստանի անկախացումից վեր: Այդ մասին են վկայում արտասահմանյան լրատվամիջոցներում արված մի քանի տասնյակ հրապարակումները, այդ թվում այնպիսի հեղինակավոր լրատվամիջոցներում, ինչպիսիք են՝ Ալջազիրան<sup>58</sup>, Ֆրանս-24-ը<sup>59</sup>, Ֆրանսիայի և Գերմանիայի հանրային ռադիոները, Ռոյթերզ գործակալությունը<sup>60</sup>, ինչպես նաև OpenDemocracy<sup>61</sup> միջազգային լրատվական կայքը: Մի քանի տասնյակ հեղինակավոր բնապահպանական և իրավապաշտպան<sup>62</sup> կազմակերպությունների կողմից հրապարակված սոլիդարության հայտարարությունները<sup>63</sup>, լոնդոնյան կազմակերպությունների կողմից վերջերս սկսված գլոբալ քարոզարշավը<sup>64</sup> շարժումը դարձնում են միջազգային իրավապաշտպան և բնապահպան, ժողովրդավարությունների պաշտպանության շարժման մասը: Դրանցից մի մասը Ամուլսարի շարժմանն աջակցում է ISDS՝ ներդրումների միջազգային արբիտրաժների կողմից ժողովրդավար բարեփոխումներին վնասող

---

<sup>58</sup> Armenia: Mining Out the Leopard, People and Power, AlJazeera  
<https://www.aljazeera.com/programmes/peopleandpower/2019/01/armenia-mining-leopard-190130061637859.html>

<sup>59</sup> Armenian activists fight to shut down gold mine, save their water,  
<https://observers.france24.com/en/20180713-armenian-activists-fight-shut-down-gold-mine-save-water>

<sup>60</sup> Gold of contention: Armenia land dispute in spotlight as government steps in,  
<https://www.reuters.com/article/us-armenia-mine-protests/gold-of-contention-armenia-land-dispute-in-spotlight-as-government-steps-in-idUSKCN1T701D>

<sup>61</sup> *Վիճահարույց ոսկու հանքը Հայաստանի նոր կառավարության փորձաքննությունն է* (2018.09.03)  
<https://www.opendemocracy.net/en/odr/the-saga-of-amulsar/>

<sup>62</sup> FIDH, Amulsar Mine in Armenia: The government must avoid potential environmental and human disaster:  
<https://www.fidh.org/en/region/europe-central-asia/armenia/amulsar-mine-in-armenia-government-must-avoid-potential-environmental>

<sup>63</sup> BankWatch Network, Amulsar old mine, Armenia: <https://bankwatch.org/3872639#background>; Solidarity letter on Amulsar from 40 organizations [https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Solidarity-letter-to-Armenian-PM\\_Amulsar-gold-mine\\_Jan-22-2019.pdf?fbclid=IwAR1DTLF39FW3213DU8Pg8BjyV9rBmy87LwkdobNtQ9xDyP5\\_jkxIxWUN4ek](https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Solidarity-letter-to-Armenian-PM_Amulsar-gold-mine_Jan-22-2019.pdf?fbclid=IwAR1DTLF39FW3213DU8Pg8BjyV9rBmy87LwkdobNtQ9xDyP5_jkxIxWUN4ek)

<sup>64</sup> Stop Lydian's toxic attack on democracy, Global Justice Now and War or Want, London:  
[https://act.globaljustice.org.uk/stop-lydian%E2%80%99s-toxic-attack-democracy?fbclid=IwAR0VAqIwF-dmuLnJF6J5nB2QzVqIU\\_iTsIE06Ee5Qfwz-VPICeQDv45q61k/](https://act.globaljustice.org.uk/stop-lydian%E2%80%99s-toxic-attack-democracy?fbclid=IwAR0VAqIwF-dmuLnJF6J5nB2QzVqIU_iTsIE06Ee5Qfwz-VPICeQDv45q61k/); Save Amulsar (n.d.).  
<https://secure.waronwant.org/page/46045/action/1?ea.tracking.id=short>

գործունեության դեմ պայքարի համատեքստում: Ըստ Ամուլսարի շարժման ակտիվիստների հարյուրավոր (կամ հազարավոր) մարդիկ նվիրատվություններ են տրամադրում շարժմանը ոչ միայն Հայաստանից, այլև աշխարհի տարբեր երկրներից (հիմնականում սփյուռքի հայերից և միջազգային շարժումներից), որոնց օգնությամբ մեկ տարուց ավելի ակտիվիստները կարողանում են շարունակել Ամուլսարի հանքավայրի տարածքի շրջափակումը:

### ***Ներդրումների միջազգային արբիտրաժի (ISDS) հարցը***

Արդեն վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ամուլսարում նախատեսված հանքավայր ճանապարհները փակած ճամբարային գոտի իր կատարած 2018 հուլիս 6-ի առաջին այցից, ուղղաթիռով հանքի տարածքի վրայով թռիչքից և բնակիչների հետ հանդիպումներից հետո հայտարարեց, որ ինքն անձամբ չէր ցանկանա և չէր նախաձեռնի Ջերմուկի մոտակայքում մետաղական հանքի շահագործումը: Սակայն այս պայմաններում, երբ նախորդ կառավարությունը տվել է թույլտվությունները, պահանջվում են լրացուցիչ ստուգումներ. *«Ունենք իրավիճակ, երբ կատարվել է ահռելի ծավալի ներդրում, որը դե յուրե տեղի է ունեցել ՀՀ կառավարության թույլտվությամբ, համենայն դեպս, գոնե այս պահին չունենք տեղեկատվություն, որ ինչ-որ կարգ է խախտվել: Հանքի շահագործման հետ կապված սկսվել են ստուգումներ, որոնք կշարունակվեն: Պետք է պատասխանենք երկու հարցի. առաջին՝ պարզել հանքի հնարավոր ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա, երկրորդը՝ պարզել հանքի հնարավոր շահագործման ազդեցությունը Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաք զարգացման վրա»<sup>65</sup>*: Այս և այլ հայտարարություններից հետևում է, որ միմիայն նախկին ռեժիմի կողմից կնքված պայմանագրերը և դրանցից բխող տնտեսական պարտավորություններն են, որ ստիպում են ներկա կառավարությանը դիտարկել Ամուլսարում հանքի շահագործման հնարավորությունը:

Նոր կառավարությունը՝ ի դեմս վարչապետի, համայնքների և Լիդիանի միջև կոնֆլիկտը լուծելու ժամանակավոր առաջարկությամբ հանդես եկավ, որով Լիդիանը պետք է ժամանակավորապես դադարեցնու իր գործունեությունը՝ մինչև նոր կառավարության կողմից փաստերի ծանոթացումը և որոշման կայացումը: Լիդիանը այս առաջարկը մերժեց: Վերջիններիս անզիջում և չհամագործակցող պրակտիկան ստիպել է ենթադրել, թե այն ի սկզբանե ունեցել է գործը ISDS ներդրումների միջազգային արբիտրաժ հասցնելու և ՀՀ բյուջեից խոշոր փոխհատուցում պահանջելու (հայտարարվել են 0.5 մլն-ից մինչև 2 մլրդ ԱՄՆ դոլարի թվերը) նպատակ: Այս վարկածի մասին բարձրաձայնել են կառավարության տարբեր անդամներ իրենց մասնավոր և հրապարակային ելույթներում: Արբիտրաժային դատարան

<sup>65</sup> Վարչապետը հանդիպել է Ամուլսարի հանքի շահագործման դեմ բողոքող քաղաքացիներին ու «Լիդիան Արմենիա»-ի ներկայացուցիչներին (2018.07.06). <https://www.primeminister.am/hy/press-release/item/2018/07/06/Nikol-Pashinyan-visit-to-Jermuk/>; Ամուլսար. կողմերը չեն զիջում (2018.07.06). *Armenian Public TV*. [վիդեո]. <https://bit.ly/2OKR842>

դիմելու Լիդիանի կողմից շարունակաբար հնչեցվող սպառնալիքներով և դրա հիման վրա առաջացող վախերով ու մտավախություններով են որոշ գործիչներ հիմնավորում Ամուլսարում հանքի շահագործման հնարավորությունը առաջ տանող իրենց դիրքորոշումը:

Համաձայն 2019 մարտին Լիդիանի կողմից պաշտոնապես հնչեցրած հայտարարության<sup>66</sup>, այն մտադիր է Առևտրի և ներդրումների մասին երկկողմ պայմանագրի (տվյալ դեպքում՝ Միացիալ Թագավորության և Կանադայի հետ պայմանագրերի) հիման վրա դիմել ներդրումային արբիտրաժ և դրա միջոցով Հայաստանի կառավարությունից տույժերի դիմաց փոխհատուցում պահանջել: Մինչ օրս հնչած պահանջներից ամենաբարձր թիվը 2 մլրդ ԱՄՆ դոլար դրամագլուխն է, ինչը բնական է, ծանր բեռ է Հայաստանի համար:

ISDS-ով ժողովրդավար պետություններին սպառնալու և ոչ բիզնես գործունեության միջոցով հսկայական գումարներ ստանալու սխեման միջազգային ֆինանսական կազմակերպությունների վերջին տասնամյակներին գլոբալ մակարդակում աճ արձանագրած պրակտիկա է<sup>67</sup>՝ սպառնալով կառավարությունների արդյունավետ և բարեփոխիչ գործունեությանը: Մարդու իրավունքների, ժողովրդավարության և բնության պաշտպանության ցանկացած որոշում արտերկրյա գրանցում ունեցող բիզնես կառույցները կարող են ընկալել որպես իրենց ներդրումների նկատմամբ հարված և մտնել ներդրումային արբիտրաժ, քանի որ դրա սկզբունքները ոչ թե ներպետական օրենսդրությունն են և միջազգային կոնվենցիաները՝ կապված մարդու իրավունքների, կենսաբազմազանության և հանրային շահի պաշտպանության հետ, այլ ներդրողի/բիզնեսի պաշտպանությունը: Նման արբիտրաժային գործընթացները որպես կանոն ժամանակատար և ծախսատար են ինչպես բիզնեսների, այնպես էլ՝ պետությունների համար և ունենում են տարբեր արդյունքներ. հաղթում են ինչպես բիզնեսները, այնպես էլ պետությունները: Օրինակ՝ 2014 թվականի հաշվետվությամբ վիճակագրությունն ունի այս տեսքը. որոշումների 37%-ը ի օգուտ պետությունների են, 25%-ը՝ արտաքին ներդրողների, 28% դեպքերում կողմերը հաշտվել են, 8% դեպքերը չեն շարունակվել<sup>68</sup>: Ներդրումային արբիտրաժի գործընթացները հիմնականում գաղտնի են, դրանց հրապարակումը կախված է լինում պետությանը ներկայացնող կողմի ցանկությունից<sup>69</sup>:

Տարիներ է, ինչ ներդրումային արբիտրաժի մեխանիզմը, փակ կառուցվածքը և կառավարությունների և հանրությունների առաջ անհաշվետու կարգավիճակը, ինչպես նաև խիստ սահմանափակ թվով դատավորների կողմից կայացվող դատավճիռների (յուրաքանչյուր գործ քննում է 3 դատավոր) լիազորության բարձր աստիճանը միջազգայնորեն քննարկվող քաղաքական հարց է: Այն վերջին տարիներին արժանանում է

<sup>66</sup> <https://b24.am/business/75725.html>

<sup>67</sup> <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5417151/>

<sup>68</sup> [https://trade.ec.europa.eu/doclib/docs/2015/january/tradoc\\_153046.pdf](https://trade.ec.europa.eu/doclib/docs/2015/january/tradoc_153046.pdf)

<sup>69</sup> *Frequently Asked Questions About ISDS* (n.d.) <https://isds.bilaterals.org/?-the-basics->

միջազգային քաղաքացիական-ժողովրդավարական, իրավապաշտպանական և բնապահպանական շարժումների, հասարակական կազմակերպությունների, եվրոպական պետությունների կոշտ քննադատություններին: Եվրոպական երկրներում քաղաքացիական կառույցները կոչ են անում իրենց կառավարություններին դուրս գալ ներդրումների պաշտպանության երկկողմ առևտրային պայմանագրերից, քանի որ դրանք խոչընդոտում են իրենց երկրներում առողջապահական և բնապահպանական ռեֆորմները: Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ երկրների, այդ թվում հաստատված ժողովրդավարական երկրների (օր.՝ Գերմանիայի Դաշնության) օրինակները, խնդիրը հիմնականում կապված է երկրներում ժողովրդավարական կառավարությունների իրավագործության կրճատման, անհրաժեշտ բարեփոխումների կասեցման և բիզնես շահերը ի հաշիվ հանրային իրացման հարցերի հետ<sup>70</sup>: OpenDemocracy միջազգային վերլուծական կայքում օգոստոսի 13-ին լույս տեսած հոդվածը մանրամասնում է Ամուլսարի դեպքի հետ կապված արբիտրաժային խնդիրները և որակում այն իբրև հարված Հայաստանի ժողովրդավարությանը<sup>71</sup>:

Ամուլսարի դեպքում ՀՀ կառավարությանը տրված իրավական մասնագիտական խորհրդատվությանը համաձայն՝ Լիդիանը չի կարող օգտվել հայ-բրիտանական երկկողմ պայմանագրից, քանի որ ժամանակին գրանցվել է օֆշորային գոտում, որի վրա երկկողմ առևտրային պայմանագիրը չի տարածվում: Հայտնի է նաև, որ 2018 օգոստոս-սեպտեմբերին հիմնադրված դուստր ընկերության միջոցով նույնպես չի կարող դիմել ներդրումների արբիտրաժին: Այդուհանդերձ, Լիդիանը շարունակում է բարձրաձայնել արբիտրաժի միջոցով փոխհատուցումներ կորզելու սպառնալիքը:

Նույնիսկ եթե Լիդիանին հաջողվի ներդրումային արբիտրաժային գործընթաց սկսել, ըստ բնապահպանների և որոշ իրավաբանների, ՀՀ կառավարությունն ունի պատշաճ պաշտպանության հիմքերը՝ ելնելով հանքարդյունաբերական գործընթացի թույլտվությունների տրման հետ կապված համատեքստից, նախկին ավտորիտար և կոռումպացված կառավարության կողմից ընդունված որոշումներից, Լիդիանի կողմից պետությանը տրամադրած թերի ՇՄԱԳ-ով թյուրիմացության մեջ գցելու հանգամանքից:

Հասկանալի է, որ Հայաստանն ունի նաև հասարակական մակարդակով միջազգային աջակցություն՝ ի դեմս ներդրումային արբիտրաժի առաջացրած խնդիրների դեմ աշխատող բրիտանական և եվրոպական կառույցների, որոնք իրենց կառավարություններից պահանջում են վերանայել առևտրի երկկողմ համաձայնագրերը կամ չեղարկել դրանք<sup>72</sup>: Այս համատեքստում է, որ Ամուլսարի հարցում անգամ սկսվել է միջազգային

<sup>70</sup> Courts of arbitration - Do they protect companies at public expense? (2014.09.30). <https://www.dw.com/en/courts-of-arbitration-do-they-protect-companies-at-public-expense/av-17966690>  
US-EU bickering. (2014.04.01) <https://www.dw.com/en/us-eu-bickering/av-17533837>

<sup>71</sup> <https://www.opendemocracy.net/en/odr/corporate-courts-latest-threat-democracy-armenia>

<sup>72</sup> <https://www.globaljustice.org.uk/news/2019/jul/30/government-challenged-rule-out-corporate-courts-after-brexit-following-criticism>

ստորագրահավաք<sup>73</sup>, որպեսզի Լիդիանը դադարեցնի արբիտրաժային հայցի հետ կապված գործողությունները: Միջազգային կազմակերպությունները այցելում են Հայաստան և իրենց աջակցությունը հայտնում Ամուլսարի շարժման անդամներին, նկարահանում ֆիլմեր և ռեպորտաժներ Ամուլսարի շարժման մասին<sup>74</sup>:

Պետք է նկատի ունենալ, որ արբիտրաժային դատարաններով նոր կառավարությանը սպառնում են այլ միջազգային ընկերություններ ևս (օրինակ՝ Մանիթեկը), և այս շղթան դեռ կարող է շարունակվել: Հետևաբար այս հարցում կառավարությունը ստիպված է ապագային միտված ինքնապաշտպան երաշխիքային քաղաքականություններ իրականացնել այսօր, ինչպես օրինակ՝ առևտրային երկկողմ պայմանագրերից դուրս գալն է: Այս կերպ է վարվել օրինակ 2016-ին Մոնտենեգրոն և ոչ միայն. սա դառնում է ներքին ժողովրդավարությունը պաշտպանելու նախընտրելի մեխանիզմ եվրոպական և աշխարհի այլ երկրների համար<sup>75</sup>: Ինդոնեզիան և Հնդկաստանը<sup>76</sup> ևս լիովին ձերբազատվել են այս պայմանագրից, ինչը սակայն որևէ կերպ չի ազդել երկիր եկող ներդրումների վրա: Նման գլխացավանքները կանխելու նպատակով էր, որ Եվրամիությունն ի վերջո հրաժարվեց ԵՄ-ԱՄՆ-ի միջև համանման ձևաչափ ենթադրող TTIP<sup>77</sup> համաձայնագրից՝ տեղի տալով եվրոպական երկրների ժողովրդական ալիքի ձայնին:

### ***Հայաստանում տնտեսական ժողովրդավարության հարցը***

Տնտեսական ժողովրդավարությունը, ի տարբերություն օլիգարխիկ տնտեսական կառուցվածքի, Հեղափոխության և նոր կառավարության համար ճանաչված է նշանակալից նպատակներից մեկը: Գնդեվազ և Ջերմուկ համայնքները Ամուլսարի հարակից համայնքների շարքում ամենից զարգացած և ինքնաբավ տնտեսություն ունեցող համայնքներն են: Գնդեվազի բնակիչների մեծ մասն ունեն (ունեցել են) այգիներ, շատերը զբաղվում են անասնապահությամբ, առկա են/(էին) անասնապահական և կաթնամթերքի արտադրության ֆերմաներ<sup>78</sup>: Ջերմուկում տնտեսությունը առավել բարդ կառուցվածք ունի, որն ապահովում է տնտեսության ներսում որոշակի կայուն շերտավորում, որում տնտեսական բարիքի բաշխումը հասնում է բնակիչների սոցիալապես ցածր խավերին՝ ապահովելով տնտեսական ժողովրդավարության որոշակի մակարդակ և դրա զարգացման պոտենցիալ: Այստեղ առկա են խոշոր սեփականատերերից մինչև «ինքնազբաղ» բնակիչներ, որոնք եկամուտ են ստանում բնակարանները վարձակալության տալով կամ բնամթերքի արտադրությամբ, խոտաբույսերի

<sup>73</sup> <https://act.globaljustice.org.uk/stop-lydian%E2%80%99s-toxic-attack-democracy>

<sup>74</sup> <https://www.aljazeera.com/blogs/europe/2019/01/mining-environment-battle-armenia-amulsar-gold-190130135537637.html/>

<sup>75</sup> [https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcbinf2018d1\\_en.pdf](https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcbinf2018d1_en.pdf)

<sup>76</sup> <https://www.lexology.com/library/detail.aspx?g=4bdc087c-20f0-4729-9166-1d6de9b8d2de>

<sup>77</sup> <https://waronwant.org/what-ttip>

<sup>78</sup> <https://www.youtube.com/watch?v=q-QU91o9WLC>

հավաքչությամբ, փաթեթավորմամբ ու վաճառքով: Ջերմուկն ինչպես Հայաստանում, այնպես էլ Խորհրդային Միության տարածքում ամենահայտնի առողջարանային քաղաքներից մեկն է եղել: Առողջարանները, ինչպես վկայում են դրանց տնօրենները տարբեր հարցազրույցներում (AlJazeera, Global Justice Now), Ջերմուկի տնտեսության հիմնաքարն են, իսկ հանքի հարակից գոյությունը կվերացնի այսպիսի տնտեսությունը: Մա տեղի կունենա ոչ միայն օբյեկտիվ աղտոտման, այլև աղտոտվածության ռիսկի և մաքուր առողջարանային գոտու կորսված համբավի պատճառով: Ամուլսարում հանքի նախագծի իրագործման դեպքում այս համայնքների բազմաշերտ և առավել համաչափ տնտեսությունը կվտանգվի, քանի որ հանքի հարևանությամբ առողջարանային և բնամթերային տնտեսությունները դատապարտված կլինեն: Արդյունքում տարածաշրջանի բազմաշերտ և ինքագրադ տնտեսությունների փոխարեն կունենանք մեկ գերիզոտ տնտեսվարող, որն ընդամենը 10 տարի է նախատեսում աշխատել՝ ի հակադրություն Ջերմուկ համայնքում արդեն եղած կենսակայուն, երկարաժամկետ աշխատատեղերի: Ըստ Հայաստանի Ժողովրդին ՀՀ նոր կառավարության և վարչապետ Նիկոլ Փաշինյանի կոչերի, քաղաքացիները իրենք պետք է լինեն սեփական համայնքների զարգացման նախաձեռնողն ու դրա տնտեսության տերը: Այսինքն՝ քաղաքացիները պետք է անեն հենց այն, ինչ տարիներ է, ինչ առանց պետական աջակցության, ավելին՝ նախորդ ռեժիմի և Լիդիանի հանքի նախագծի առաջացրած խոչըրդոտների պայմաններում հաջողել են իրականացնել տեղի համայնքների բնակիչները: Ջերմուկին կից հանքի բացումը նշանակելու է, որ 10 տարի հետո այս քաղաքը (իսկ հավանաբար նաև Վայոց Ձորի մարզի այլ համայնքներ ևս) էլ ավելի կախյալ են դառնալու պետության աջակցության ծրագրերից, քանի որ 1950 թվականից հիմնված առողջարանային կենսամիջավայրը քայքայվելու է, իսկ դրա համբավը լիովին նսեմանալու է:

Բացի դրանից, Ջերմուկը Հայաստանի և հայ ժողովրդի համար ունի նաև խորհրդանշական արժեք. Ջերմուկ անունը, հանքային ջրերը հայտնի են դարձնում ողջ Հայաստանը և բարձրացնում ողջ երկրի տնտեսական ու տուրիստական գրավչությունը: Նույնիսկ Ֆինանսական միջազգային կորպորացիայի օմբուդսմենի զեկույցում է հաստատվում, որ Ջերմուկ քաղաքի և բրենդի վրա ազդեցությունը պատշաճ հանքի նախագծով գնահատված չէ<sup>79</sup>: Այս խնդիրը անուղղակիորեն ճանաչվում է անգամ Լիդիանի կողմից, որը նրանց քաղաքականությունների տեսանկյունից փոխհատուցելի կամ կառավարելի ռիսկ է, ինչը նա ձգտում է իրականացնել «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծման և Ջերմուկում զբոսաշրջությունն ակտիվացնող գրանտային ծրագրերի միջոցով: Նույն կերպ Գնդեվազում տնտեսական վնասները մեղմելու համար Լիդիանը կառուցել է կամ (առաջարկել է կառուցել) մսի պասսաժներ՝ բնակիչներին օգնելու իրացնել արտադրված մսամթերքը: Երկու գործողություններն էլ, սակայն փայլում են ֆորմալ մոտեցմամբ, քանի որ չեն արձագանքում խնդիրներին և չեն տալիս լուծումներ: Ըստ գնդեվազցիների, մսի պասսաժը չի կարող

<sup>79</sup> [http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/LyidianComplianceInvestigationReport-06192017\\_Armenian.pdf](http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/LyidianComplianceInvestigationReport-06192017_Armenian.pdf)

թունավորված կամ վատորակ մսամթերքի վաճառքներն ավելացնել, իսկ կարճատև զբոսաշրջային ծրագրերը չեն կարող փոխարինել շաբաթներով կամ ամիսներով Ջերմուկում հանգստացողների ներդրումներին՝ հատկապես դրանց պոտենցիալ աճին (առողջարանային քաղաքին համարժեք համալիր զարգացման նախագծի պայմաններում):

Ավելին, գնահատված և առհասարակ տնտեսական առումով դիտարկման չեն արժանացել Ամուլսարում խնդրահարույց հանքի շահագործման դեպքում Սևանի ու Ջերմուկին հարակից բնակավայրերի պետական հատուկ պահպանության տակ գտնվող ջրային ավազանների և անտառային գոտիների էկո-տուրիստական առկա և պոտենցիալ տնտեսական արժեքների կորուստը: Մասնավորապես Սևանա լճի՝ որպես մաքուր քաղցրահամար ջրային պաշարի և դրա՝ որպես մաքուր տուրիստական գոտու համբավի հավանական կորստի առումով: Անգամ եթե գերթանկարժեք ներդրումների միջոցով զրոյացվեն բնապահպանական վտանգները, այս բոլոր ջրային և անտառային գոտիները ձեռք կբերեն ցիանային թունավորման ռիսկային միջավայրի համբավ, որը չի կարող վնասակար ազդեցություն չունենալ Սևանից սնվող տնտեսական ողջ շղթայի և վերոնշյալ ջրային ու անտառային գոտիների տնտեսական արժեքի և գործնականում եկամուտների վրա:

***Ե՛վ Ջերմուկը ու դրա հարակից բոլոր գոտիները, և՛ Սևանը ու դրանից տնտեսապես սնուցվող մյուս տարածաշրջանները անդառնալիորեն կկորցնեն իրենց մաքուր էկոլոգիական միջավայր լինելու համբավը և տնտեսական արժեքն ու արժանիքները:*** Այս մասին մեզ պատկերացում է տալիս այն փաստը, որ 2019-ին միայն Սևանի ջրերը կանաչելու լուրը մեծ ազդեցություն էր ունեցել ներքին տուրիզմի կտրուկ անկման և հանգեցրել տնտեսվարողների եկամուտների կորստի, ինչի հետևանքով Սևանի հանգստավայրի տնտեսվարողների բողոքի ալիք բարձրացավ<sup>80</sup>: Բոլոր այս մանր թվացող, սակայն, ահռելի տարածում ունեցող տնտեսական շղթայի (հետևաբար նաև սոցիալ-քաղաքական հետևանքների) հնարավոր կորուստները անտեսված և հաշվարկված չեն մինչ օրս:

Բացի տնտեսական հարցից բնակիչների մտահոգությունները Ամուլսարում հանքի շահագործման մասով կապված են նաև Ջերմուկի սոցիալ-տնտեսական կառուցվածքի սպասվող փոփոխության հետ: Ըստ արդեն իսկ առկա միտումների և ապագայի կանխատեսումների, Ջերմուկը առողջարանային քաղաքից, որտեղ զբաղվածություն ունի տարաշերտ բնակչություն (այդ թվում կանայք և երիտասարդներ) կվերածվի նախ երիտասարդ և միջին տարիքի տղամարդկանց զբաղվածություն ապահովող հանքի բանավանի, այնուհետև՝ հանքի փակումից հետո, տնտեսապես ամայի գոտու: Ջերմուկում մեծամասամբ տղամարդ զբաղվածների հոսքի ռիսկերը ևս ճանաչված են Լիդիանի կողմից: Այն կառավարելու նպատակով կազմակերպությունը բնակիչների, մասնավորապես կանանց շրջանում իրականացրել է սեռավարակների մասին տեղեկատվական արշավներ և

<sup>80</sup> Սևանի լողափերի վարձակալները բողոքում են (2019.07.15).  
<https://www.azatutyun.am/a/30057070.html>



պահպանակներ բաժանել<sup>81</sup>՝ սրանով կրկին անգամ փաստելով հարակից համայնքներում կանանց և՛ սոցիալ-տնտեսական դիրքի անկման, և՛ ֆիզիկական շահագործման ռիսկերը:

### ***Հայաստանի ժողովրդավարության և ինքնիշխանության հարցը***

Հեղափոխության հռչակված նպատակներից էր նաև Հայաստանում ժողովրդավարության հաստատումը և ժողովրդի շահերի պաշտպանությունը: Ի սկզբանե Ամուլսարում ոսկու արդյունահանման նպատակով տեղի ունեցած գործընթացները հակասել են Հայաստանի օրենքներին և որոշման կայացման մեջ ժողովրդի մասնակցության տարրական ժողովրդավարական չափանիշներին՝ հանրային լուսմներից և որոշումների կայացումից դուրս թողնելով ազդակիր համայնքների հազարավոր քաղաքացիների: Այս դրությունը կտրուկ փոխվեց Հեղափոխության օրերին և դրանից հետո, երբ ազդակիր համայնքների բնակիչները այլևս չվախենալով ռեպրեսիվ իշխանության ճնշումներից, իրենց և իրենց ընտանիքների կյանքի ու առողջության իրավունքի, շրջակա միջավայրի պաշտպանության և տնտեսական կայունության համար պայքարը շարունակեց առավել տեսանելի և ուղիղ դիմադրության եղանակով՝ կասեցնելով հանքի բացման անշրջելի հետևանքների առաջացումը: Հեղափոխությունից հետո բնակչության դիմադրության տեսանելի ակտիվացումը և Լիդիանի աշխատանքների ժամանակավոր արգելափակումը հիմնավորված է ժողովրդի կամքի ուղիղ, ապակենտրոն արտահայտման, ինչպես նաև ժողովրդավարության առաջնահերթությամբ<sup>82</sup>:

Հեղափոխության առանցքային նպատակներից է Հայաստանի ինքնիշխանության կայացումը, որը ենթադրում է «հայակենտրոնություն» կամ հայաստանցիների հանրային շահի պաշտպանության առաջնահերթությունը այլ (նույնիսկ գործընկեր) երկրների կամ սուբյեկտների շահերի համեմատ: Ժամանակակից աշխարհում, բազմաթիվ միջազգային բիզնես կազմակերպություններ ունեն ավելի գորեղ իշխանություն (համարվում են գլոբալ աշխարհի օլիգարխները), քան շատ փոքր ու մեծ երկրներ, որոնք վերածված են հանքահումքային կցորդների և էժան աշխատուժ տրամադրողների: Հատկապես օֆշորային գոտիներում գրանցված, հետևաբար ոչ թափանցիկ և անվերահսկելի միջազգային կորպորացիաների շահերի նկատմամբ տեղական ժողովրդի շահերի առաջնահերթության պաշտպանությունը ևս Հայաստանի ինքնիշխանության խնդիր է: Ամուլսարի հարցը հենց այսպիսի բնույթ ունի. այն միջազգային բիզնեսի և Հայաստանի ժողովրդի շահերի բախման հանգույց է: Այս հանգույցի լուծման մեջ ակնկալվում է, որ ՀՀ կառավարությունը պետք է տեղի ժողովրդի շահը առաջ մղի:

<sup>81</sup> <https://www.1in.am/2057079.html>

<sup>82</sup> [https://youtu.be/\\_biJ3zA4boM?t=1995](https://youtu.be/_biJ3zA4boM?t=1995)

***Ամուլսարում հանքի հնարավոր շահագործման արկածախնդրությունը.  
կոռուպցիայի կասկածները և հանրային անվստահության հիմքերը***

Գեոթիմ/Լիդիանը չունենալով հանքարդյունաբերական ոլորտի փորձառություն Հայաստանում սկսած 2013 թ-ից ձեռք է բերել կասկածելի հիմքերով աջակցություն՝ ՀՀ կառավարության կողմից կենսաբազմազանության օրենքը և Սահմանադրության 60 կետը շրջանցող, ինչպես նաև ընկերության ծախսերը (100 մլն դոլարով) կրճատող<sup>83</sup> որոշումների տեսքով: Ամուլսարում հանքի շահագործման նախագծով փաստացի չի իրագործվել Ջերմուկը զբոսաշրջային կենտրոն դարձնելու ՀՀ կառավարության 2008 որոշումը՝ ազդակիր համայնքների տնտեսությունը մատնելով ինքնահոսի, որը Գեոթիմ/Լիդիանի հանքի նախագծի առաջացրած խոչընդոտների պայմաններում անգամ որոշակի տնտեսական ինքնաբավ կյանք և զարգացում է արձանագրել:

Գեոթիմ/Լիդիանի կողմից դրսևորվել է Ջերմուկ ազդակիր համայնքի նկատմամբ անհարգալից, խտրական վերաբերմունք՝ երկար տարիներ բացառելով Ջերմուկի ազդակիր լինելու կարգավիճակը, թաքցնելով տվյալներ և մատուցելով անճիշտ տեղեկություններ: Որոշ ժամանակ, օրինակ, հանրությանը չէր տեղեկացվում հանքի նախագծում ցիանիդի նախատեսվող գործածության մասին: Իսկ հետագայում մերժվում էր ցիանային հարթակների վթարների հնարավորությունը, այնինչ միջազգային փորձում առկա դեպքերն հակառակն են վկայում<sup>84</sup>:

Գեոթիմ/Լիդիանը 2009 թվականից մինչև 2016-ը 4 անգամ փոփոխել է Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ փաստաթուղթը, որոնցից ոչ մեկում Ջերմուկն իբրև ազդակիր համայնք ներառված չէր: Չնայած սրան առկա են Ջերմուկ համայնքի բնակիչների հետ Գեոթիմ/Լիդիանի բարձրաստիճան ներկայացուցիչների հանրային հանդիպումների տեսագրություններ, որոնց ժամանակ վերջիններս ներկայացնում են հանքի նախագիծը և փորձում վերափոխել Ջերմուկի բնակիչների մերժողական տրամադրությունները: Այստեղից ծագում է գլխավոր հարցը, թե ինչու և ինչպես կարող էր 8/13 կմ հեռավորության վրա գտնվող Ջերմուկը Գեոթիմ/Լիդիանի կողմից չճանաչվել ազդակիր համայնք, այն դեպքում, երբ միաժամանակ գիտակցվում էր համայնքի հետ աշխատանք տանելու նշանակությունը: Մինչ օրս այս հարցը միայն ենթադրական պատասխանի տեղիք է տալիս. Ջերմուկի ողջ բնակչությունը, այդ թվում ՏԻՄ ներակայացուցիչները ի սկզբանե բարձրաձայնել են իրենց բացասական կարծիքը նախագծին: Լինելով մի քանի հազարի հասնող բնակչությամբ, տնտեսապես առավել ինքնաբավ և կոնկրետ հարցի շուրջ համախմբված համայնք, ջերմուկցիները կարող էին լուրջ գլխացավանք դառնալ օրենքով պահանջվող հանրային լսումների իրականացման ժամանակ, ինչից խուսափելու համար էլ կարող էր Գեոթիմը/Լիդիանը զրկել համայնքին ազդակիր

<sup>83</sup> <https://www.ecolur.org/hy/news/amulsar/pef-100-million-gift-to-amulsar-gold-mining-project-of-lydian-international-company-from-armenian-government/7291/>

<sup>84</sup> <https://a1plus.am/hy/article/150961>

լինելու իրավական կարգավիճակից: Ջերմուկն ազդակիր համայնք է ճանաչվել միայն 2016-ին՝ ՏԻՄ խոշորացման գործընթացում Ամուլսարում հանքի ազդակիր Գնդեվազ և այլ գյուղերը իր մեջ ներառելու հետևանքով և նույն թվականին Լիդիանի կողմից սոցիալական ազդեցության գոտի ճանաչվելով:

Լիդիանի թույլ տված այս և այլ թերացումների, բարեվարքության ու միջազգային ստանդարտներին համապատասխանելիության բացթողումների մասին հաշվետվություն է ներկայացրել նաև ՄՖԿ Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի (ՀԱՊԽ/CAO) գրասենյակը<sup>85</sup>:

Այսպիսով, Լիդիանի հանդեպ ազդակիր համայնքների բնակչության և Հայաստանի հանրության վստահության ցածր մակարդակը պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով, որոնց թվում՝

- Գնդեվազ գյուղի ջրագծերի բազմակի վնասումն է,
- բնապահպան և տեղացի ակտիվիստների դեմ ենթադրվող մեղիա-արշավները և դատական հայցերը<sup>86</sup>
- կոռուպցիոն ռիսկի մասին հուշող գործոնները՝ 1.Գնդեվազի նախկին գյուղապետի հանդեպ բացված քրեական գործը; 2.նախկին կառվարության օրոք 2013-ից ի շահ Գեոթիմի/Լիդիանի կայացված օրինականության և սահմանադրականության առումով վիճարկելի որոշումները; 3.«Լույս» հիմնադրամին (որի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր Ս. Սարգսյանը) Լիդիանի կողմից 2014-ին առանձնապես խոշոր չափի՝ 122 մլն դրամ նվիրատվությունը<sup>87</sup>, այն դեպքում, երբ հիմնադրամը մշտապես կասկածվել է անհայտ ուղղությամբ միլիարդավոր գումարներ ծախսելու մեջ<sup>88</sup>:

Բոլոր այս գործոնների մեջ առանձնահատուկ տեղ ունի Լիդիանի կողմից տրամադրված ՇՄԱԳ-ի թերությունները.

- ***ՇՄԱԳ-ում բնապահպանական ազդեցության և կենսաբազմազանության հարցերով անճշտություններ և ճշմարտության անհամապատասխանություններ***

---

<sup>85</sup> Համապատասխանության Մշտադիտարկման Ջեկուցագիր. Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներդրումները «Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա» ընկերության մեջ (Նախագծեր թիվ 25924 եւ 27657)

Բողոքներ թիվ 01 և 02. «Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա» (Ամուլսար Գոլդ Փրոջեքթ) նախագծի մեջ ՄՖԿ-ի ներդրումների շուրջ ՀԱՊԽ-ի հետաքննության մասով ՄՖԿ-ի պատասխանի մշտադիտարկում (2018.10.02) *armecofront.net*. <https://bit.ly/2GTPtmt>

<sup>86</sup> <http://www.armecofront.net/amulsar/dataran/>

<sup>87</sup> <https://armtimes.com/hy/article/67976>

<sup>88</sup> <https://hetq.am/hy/article/90182>

Գեոթիվ/Լիդիանը իր նախկին կազմած ՇՄԱԳ-ում ներկայացրել է ճշմարտությանը չհամապատասխանող այնպիսի տվյալ, որը դժվար է համարել պատահական թերացում, ինչպիսին Ջերմուկն ազդակիր չճանաչելը: ՄՖԿ Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի (ՀԱՊԽ/CAO) գրասենյակի բազմաթիվ նյութերում ակնհայտ նշված են այլ անճշտությունների և թերացումների մասին: Մա այն դեպքում, երբ Լիդիանը և նրա գործունեության ջատագովները ջանքեր չեն խնայել կազմակերպությանը որպես բացառիկ պատասխանատու և բարձրակարգ ստանդարտների հետևող կառույց ներկայացնելու հարցում: Հավանաբար հենց այս՝ կազմակերպության հեղինակության ձևավորման նպատակով է, օրինակը, Լիդիանը ՇՄԱԳ կենսաբազմազանության գանահատման աշխատանքներին մասնակից կազմակերպությունների թվում ներկայացնում է Բնության համաշխարհային հիմնադրամին (WWF), այնինչ դրա հայաստանյան մասնաճյուղի ղեկավարը հերքում է այս տվյալը՝ 2018.08.30-ին իր տված մասնագիտական գնահատականում<sup>89</sup>: Վերջինս գնահատում է նաև ՇՄԱԳ-ի համապատասխանությունը կենսաբազմազանության տարածքի ուսումնասիրության, կենսաբազմազանության պահպանության և փոխհատուցման հարցերով և բոլոր այս կետերով լուրջ թերացումներ արձանագրում՝ եզրակացնելով, որ ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը հակասում է ՀՀ օրենսդրությանը և ՀՀ միջազգային պարտավորություններին:

ՇՄԱԳ-ում ճշմարտության հետ անհամատեղելի տվյալների մասին վկայությունները բազմաթիվ են և շարունակելի: Դրանց որոշակի մասեր թվարկված են Բնապահպանական տեսչության կողմից ձևավորված աշխատանքային խմբի անդամների զեկույցներում, ինչպես նաև ELARD-ի կողմից իրականացված փորձաքննական զեկույցում<sup>90</sup>:

### ***ՀՀ կառավարության ուղերձները՝ ըստ այս կամ այն որոշման***

Զեկույցի վերը շարադրված բովանդակությունից բխում է, որ ՀՀ նոր կառավարության որոշումը թույլատրել Ամուլսարում հանքի բացումը, կամ հակառակը կասեցնել ցանկացած տնտեսվարողի կողմից այդ տարածքում հանքի շահագործումը, իր հետ բերելու է քաղաքական հետևյալ ուղերձները:

#### **- Ամուլսարում հանքի շահագործումը կասեցնելու դեպքում՝**

1. Հայաստանում ժողովրդավարությունը և ապակենտրոն զարգացումը ոչ միայն հռչակված արժեք է, այլև իրականում գործադրվող պրակտիկա, քանի որ տեղացիների քաղաքացիական կամարտահայտումը տեղ է գտնում նրանց ներկայացուցչական մարմինների որոշումներում:

<sup>89</sup> <https://www.ecolor.org/files/uploads/2018/Amulsar%20expers%20opinions%202018/karenmanvelyan.pdf>

<sup>90</sup> <http://investigative.am/news/view/amulsar-porcaqnnutyam-ezrakacutyun.html>

2. Հայաստանում քաղաքացիների իրավունքների և հայաստանցիների հանրային շահի, ինչպես նաև բնության և ընդերքի պաշտպանությունն առաջնահերթությունն են:
3. Հայաստանում առաջնահերթ է տնտեսական ժողովրդավարության հասնելու բանաձևը՝ ի հակառակ անհամաչափ խոշոր տնտեսվարողների շահերի պաշտպանության:
4. Հայաստանի՝ որպես ժողովրդավար և ինքնիշխան երկրի միջազգային հեղինակությունը և քաղաքական դիրքը բարձր են՝ իբրև իրավունքի գերակայությամբ, կայուն և պատասխանատու ներդրումներ ակնկալող պետություն:

- **Ամուլսարում հանքի շահագործման թույլատվության դեպքում՝**

1. ՀՀ կառավարությունը պատշաճորեն չի հասցեագրում և պաշտպանում ժողովրդի/քաղաքացիների կենսական իրավունքները և շահերը՝ սրանով կորցնելով սեփական իշխանության սոցիալական հենարանի վստահությունը և ճեղքում առաջացնելով հեղափոխությամբ ձեռք բերված հանրային համերաշխության մեջ:
2. Տեղացիների ձայնը որոշիչ չէ սեփական կյանքի և առողջության իրավունքի, համայնքի և ընտանիքի տնտեսական շահի և բարեկեցության, այսինքն՝ կենսական հարցերին վերաբերող պետության որոշումների կայացման գործում, հետևաբար քաղաքացիները ձայնը ներկայացված չէ: Նույն կերպ Հայաստանի քաղաքացիական-իրավապաշտպան շարժման ձայնը նշանակալից չէ պետության կենսական նշանակության և հանրային շահին առնչվող հանգուցային որոշումների կայացման մեջ:
3. Մեկ խոշոր միջազգային տնտեսվարողի տնտեսական շահը ՀՀ կառավարությունն ավելի առաջնահերթ է համարում, քան տեղի բազմաթիվ՝ խոշոր (ջրերի գործարաններ, առողջարանային համալիրներ), միջին և մանր տնտեսվարողների (ընտանեկան տնտեսվարողների) շահն այն պարագայում, երբ դրանք ապահովում են մի քանի հազար տարբեր սոցիալական խմբերի (այդ թվում կանանց) տեղացիների արժանապատիվ աշխատանքը: Հանքի շահագործումը հանգեցնելու է տեղի սոցիալական կենսահամակարգի ոչնչացմանը, իսկ դրա փակվելուց հետո՝ նաև մեծաթիվ մարդկանց գործազրկությանը:
4. Միջազգային խոշոր տնտեսվարողի առաջ ընկրկելու քայլով կոտրվում է հեղափոխական կառավարության կողմից ինքնիշխան, ժողովրդավար և հայաստանակենտրոն Հայաստան կառուցելու մտադրության հանդեպ վստահությունն ու քաղաքական լեգիտիմությունը:

## ***Ամփոփ եզրակացություն***

Հաշվի առնելով Ամուլսարի շարժման մեջ քաղաքացիական/ժողովրդական խմբերի ներգրավման իրական սոցիալ-տնտեսական հիմնավորված շահերը, մարդկանց կյանքի և առողջության իրավունքների ու հանրային շահերի առաջնահերթության գիտակցման մակարդակը, Հեղափոխությամբ այս իրավունքները վերականգնելու մեծ հանրային հույսերը, վստահ ենք, որ Ամուլսարի շարժումը չի կարող մարել կամ չեզոքանալ, եթե անգամ նոր կառավարությունը չդրսևորի հանրային շահի առաջնահերթությունը պաշտպանելու քաղաքական կամք և չգտնի խնդիրը լուծելու իրավաքաղաքական մեխանիզմներ:

Հաշվի առնելով նաև Ամուլսարի շարժմանն առնթեր ներքին և արտաքին քաղաքական ուժերի (ինչպես Հեղափոխությանը սատարող, այնպես էլ դրա դեմ ակտիվորեն գործող) կոնֆիգուրացիան և շահագրգռության մակարդակը, Ամուլսարի շարժման ժողովրդական ներուժը տարբեր կողմեր ուղղորդելու ռեալ ռիսկերը, համարում ենք, որ նոր կառավարության կողմից խնդրի հանգուցալուծման անկարողությունը հղի է քաղաքացիական/ժողովրդական ուժերի և նոր կառավարող ուժի միջև վստահության և համագործակցային կապերի խզումով, ներքաղաքական պայթյունավտանգ լարումներով և ի վերջո Հեղափոխության նպատակների իրագործման խաթարման ռեալ վտանգներով:

Հեղափոխությունը սնուցած և Հեղափոխությունից վերածնված Ամուլսարի շարժումն ունի կոնֆլիկտի երկու կողմ, որի մի կողմում տեղի համայնքներն ու քաղաքացիական/ժողովրդական խմբերն են, իսկ մյուս կողմում՝ հանքարդյունահանող Լիդիան ընկերությունը: Այս կոնֆլիկտում բոլոր քաղքական ուժերը և հատկապես նոր կառավարությունն ու կառավարող ուժը պարտադրված են գրավել այս երկու դիրքերից միայն մեկն ու մեկը: Ելնելով Հեղափոխությանը հավաստարիմ մնալու նոր կառավարության հանձնառության հանդեպ վստահությունից՝ ակնկալվում է, որ նոր կառավարությունը և կառավարող ուժը այս կոնֆլիկտում կկանգնի համայնքների ժողովրդի/քաղաքացիների կողքին: